ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ

01.2018

02.2018

03.2018

04.2018

05.2018

06.2018

07.2018

08.2018
Օգոստոս

09.2018

10.2018

11.2018

12.2018

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

Թողարկման 25-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2018

Օգոստոս

թիվ 8 (240)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԱՐՏ 555» ՍՊԸ-ին արտարժույթի առուվաճառքի, «ԳԱՌԴԵ.Մ» ՍՊԸ-ին գրավատնային գործունեության, «ՀԱՅԱՍՏԱՆ» ԱՌԵՎՏՐԻ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» ՓԲԸ-ին փոխանակման կետի մասնաճյուղի լիցենզիաներ տրամադրելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները «ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» ՓԲԸ-ին (ներկայիս «Այդի Բանկ» ՓԲԸ) տրամադրված «ԹԱՅՄ» («TYME») արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվությունը ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ-ի «Կապան», «ԿՐԵԴՈ ՖԻՆԱՆՍ» ունիվերսալ վարկային կազմակերպություն ՓԲԸ-ի «Նոր-Նորք» մասնաճյուղերը գրանցելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 4 գրավատան նկատմամբ տուգանք կիրառելու, 2 արտարժույթի փոխանակման կետի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

4 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 140Ա որոշումը ֆինանսական շուկայում ՀՀ կենտրոնական բանկի գործառնությունների տոկոսադրույքների վերաբերյալ

5 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 133-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 279-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

7 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 134-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 336-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին»

8 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 135-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին»

10 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 136-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 301-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 297-Ն որոշման որոշ կետեր ուժը կորցրած ճանաչելու մասին»

27 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 137-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 357-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»

56 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 148-Ն որոշումը «2018-2019 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Երևան-2800» և «Ազգային դրամի 25 տարին» արծաթե հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

58 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 149-Ն որոշումը «Երաշխավորման ֆոնդին պարբերական վճարների կատարումը ժամանակավորապես դադարեցնելու մասին»

59 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 152-Ն որոշումը «2019 թվականի թողարկման «Նոյյան տապան» արծաթե ներդրումային դրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

65 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 153-Ն որոշումը «2018-2019 թվականների հուշադրամների թողարկման ծրագրով նախատեսված «Հայկական գորգ» շարքի «Վիշապագորգ», «Արևագորգ», «Արծվագորգ», «Խորանագորգ», «Խաչխորան գորգ», «Մեղվաբուն գորգ», «Կենաց ծառ գորգ», «Վահանով (վահանակիր) գորգ», «Որոտան գորգ», «Պռոշաբերդ գորգ» արծաթե հուշադրամները շրջանառության մեջ դնելու և դրանց նկարագրությունը հաստատելու մասին»

68 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «ԱՐՏ 555» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 138Ա):
- ***Գրավատնային գործունեության լիցենզիա է տրամադրվել*** «ԳԱՌԴԵ.Մ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 139Ա):
- ***Փոխանակման կետի մասնաճյուղի լիցենզիա է տրամադրվել*** «ՀԱՅԱՍՏԱՆ» ԱՌԵՎՏՐԻ ԿԵՆՏՐՈՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԵՂԲԱՅՐՆԵՐ» փակ բաժնետիրական ընկերությանը (որոշում թիվ 146Ա):
- ***Ուժը կորցրած է ճանաչվել*** «ԱՆԵԼԻՔ ԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությանը (ներկայիս «Այդի Բանկ» ՓԲԸ) տրամադրված «ԹԱՅՄ» («TYME») արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվությունը (որոշում թիվ 150Ա):
- ***Գրանցվել է*** «ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերության «Կապան» մասնաճյուղը (որոշում թիվ 1/591Ա):
- ***Գրանցել է*** «ԿՐԵԴՈ ՖԻՆԱՆՍ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերության «Նոր-Նորք» մասնաճյուղը (որոշում թիվ 1/596Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 4 գրավատան, 1 վարկային կազմակերպության նկատմամբ ***կիրառվել է տուգանք*** 830000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/557Ա,1/566Ա, 1/581Ա, 1/589Ա), 2 վարկային կազմակերպության, 2 արտարժույթի փոխանակման կետի ***հայտարարվել է նախազգուշացում՝*** հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/552Ա 1/605):

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՇՈՒԿԱՅՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «գ» ենթակետով՝ ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի 2018 թ. օգոստոսի 14-ի թիվ 140Ա որոշմամբ ***ՀՀ կենտրոնական բանկի վերաֆինանսավորման տոկոսադրույքը սահմանվել է 6.0%, ՀՀ կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոների տոկոսադրույքը՝ 7.5%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 4.5%:***

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի թիվ 279-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ և 28-րդ հոդվածները,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ, 20-րդ, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի սեպտեմբերի 9-ի թիվ 269-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու և փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգը հաստատելու մասին» թիվ 279-Ն որոշմամբ հաստատված «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգում» (այսուհետ՝ Կանոնակարգ) և Հավելված 2-ում կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգի ամբողջ տեքստում «ահաբեկչության հետ կապված անձանց» բառերը փոխարինել «ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց» բառերով,
2) Կանոնակարգի 14-րդ կետում «ֆինանսական միջոցներ կամ այլ» բառերը հանել,
3) Կանոնակարգի 30-րդ կետում և 39-րդ կետի 1-ին ենթակետում «գործարար հարաբերության նպատակը» բառերից առաջ լրացնել «գործարքի կամ» բառերը,
4) Հավելված 2-ը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն Հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյան
8 օգոստոսի 2018 թ., N 133-Ն

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. օգոստոսի 3-ին (ՀՀԳՏ N22 (625)[1], 22.08.2018):

Հավելված
ՀՀ կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի օգոստոսի 3-ի թիվ 133-Ն որոշման

Հավելված 2
«Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելման
ոլորտում հաշվետվություն տրամադրող անձանց համար սահմանվող
նվազագույն պահանջների վերաբերյալ կանոնակարգի»

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Իրական շահառուի առկայության (բացակայության) վերաբերյալ

Ես՝ _____ս, _____ _____ _____թ. _____ հաստատելով գործարար հարաբերություն կամ գործարքում հանդես գալով որպես _____, հայտարարում եմ, որ գործարար հարաբերության մեջ կամ գործարքում իրական շահառու է _____ _____ը:

Պարտավորվում եմ նաև գործարար հարաբերության ընթացքում իրական շահառուի փոփոխության դեպքում տեղյակ պահել Ձեզ:

_____ _____ _____թ.
օր *ամիս* *տարի*

_____
ստորագրություն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 2-ի թիվ 336-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ և 28-րդ հոդվածները,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ և 20-րդ հոդվածներով, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ո ւ մ է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 2-ի «Լիազոր մարմնի հրապարակած՝ ահաբեկչության հետ կապված անձանց ցանկերից հանելու խնդրանքի քննարկման, ահաբեկչության հետ կապված անձանց գույքի սառեցումը վերացնելու կարգը հաստատելու մասին» թիվ 336-Ն որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) Որոշման վերնագիրը և 1-ին կետը «, ահաբեկչության» բառից հետո, նախաբանի առաջին պարբերությունը «և ահաբեկչության» բառերից հետո լրացնել «կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման» բառերով,
2) Հավելվածի վերնագիրը և 4-րդ կետը «, ահաբեկչության» բառից հետո, 2-րդ կետը «և ահաբեկչության» բառերից հետո, Գլուխ 3-ի վերնագիրը, 11-րդ կետը «ահաբեկչության» բառից հետո լրացնել «կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման» բառերով,
3) 12-րդ կետը «Ահաբեկչության» բառից հետո լրացնել «կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման» բառերով, իսկ «ծանուցում է» բառերից հետո լրացնել «անձին, ում գույքը սառեցվել էր, ինչպես նաև» բառերով,
4) Հավելված 1-ի և դիմումի վերնագիրը «, ահաբեկչության» բառից հետո լրացնել «կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման» բառերով, դիմումի 1-ին կետում «Ահաբեկչության հետ կապված անձանց գույքի սառեցումը վերացնելու մասին» բառերը փոխարինել «Ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց գույքի սառեցումը վերացնելու մասին» բառերով,
5) Հավելված 1-ի 5-րդ կետում լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Խնդրում ենք հիմնավորել գույքի սառեցումը վերացնելու դիմումը (անհրաժեշտության դեպքում կարող եք կցել փաստաթղթեր):»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյան
8 օգոստոսի 2018 թ., N 134-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. օգոստոսի 3-ին (ՀՀԳՏ N22 (625)[1], 22.08.2018):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի մի շարք որոշումներում փոփոխություններ կատարելու մասին**

Հիմք ընդունելով «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ, 20-րդ, ինչպես նաև «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածներով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2014 թվականի հոկտեմբերի 7-ի «Բանկերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 101 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հոկտեմբերի 6-ի թիվ 296-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 261-Ն, «Ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) ընկերությունների և ապահովագրական (ներառյալ՝ վերաապահովագրական) միջնորդային գործունեություն իրականացնող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 002 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 232-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 262-Ն, «Վարկային կազմակերպությունների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 102 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու մասին» թիվ 263-Ն, «Արտարժույթի դիլերային-բրոքերային առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 103 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու մասին» թիվ 264-Ն, «Արտարժույթի առուվաճառքի գործունեություն իրականացնող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքների վերաբերյալ թիվ 104 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու մասին» թիվ 265-Ն, «Դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող անձանց կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 105 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու մասին» թիվ 266-Ն, ««Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, կորպորատիվ ներդրումային ֆոնդերի և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից լիցենզավորված կառավարիչ չունեցող ոչ հրապարակային պայմանագրային ներդրումային ֆոնդերի կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 106 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու մասին» թիվ 267-Ն, «Գրավատների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 107 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու մասին» թիվ 268-Ն, ««Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կենտրոնական դեպոզիտարիայի կողմից կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 009 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունվարի 27-ի թիվ 19-ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին« թիվ 269-Ն, «Նոտարների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա գործարքի և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 003 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. օգոստոսի 3-ին (ՀՀԳՏ N22 (625)[1], 22.08.2018):

2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 233-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 270-Ն, «Խաղատների, շահումով խաղերի, ներառյալ՝ ինտերնետ շահումով խաղերի կազմակերպիչների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 004 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 234-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 271-Ն, «Վիճակախաղերի կազմակերպիչների կողմից պարտադիր տեղեկացման ենթակա և կասկածելի գործարքի կամ գործարար հարաբերության վերաբերյալ թիվ 005 հաշվետվության ձևը, դրա լրացման և հաշվետվության ներկայացման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի հուլիսի 31-ի թիվ 235-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 272-Ն որոշումների հավելվածների ամբողջ տեքստում «ահաբեկչության հետ կապված անձանց» բառերը փոխարինել «ահաբեկչության կամ զանգվածային ոչնչացման զենքի տարածման հետ կապված անձանց» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյան
8 օգոստոսի 2018 թ., N 135-Ն

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 301-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 22-ի թիվ 297-Ն որոշման որոշ կետեր ուժը կորցրած ճանաչելու մասին**

Նպատակ ունենալով կանոնակարգել Կենտրոնական բանկի կողմից գրանցված ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման ընթացակարգը,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ հոդվածի 4-րդ մասը, 92-րդ հոդվածի 1-ին մասը և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի ««Ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից իր և իր կողմից կառավարվող ֆոնդերի մասին Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգը, ժամկետները և պարբերականությունը, կառավարչի կողմից առանձին որոշումների կայացման մասին Կենտրոնական բանկին լրացուցիչ տեղեկությունների տրամադրման կարգը» կանոնակարգ 10/03-ը հաստատելու մասին» թիվ 301-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից իր և իր կողմից կառավարվող ֆոնդերի մասին Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգը, ժամկետները և պարբերականությունը, կառավարչի կողմից առանձին որոշումների կայացման մասին Կենտրոնական բանկին լրացուցիչ տեղեկությունների տրամադրման կարգը» կանոնակարգ 10/03-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ լրացումները և փոփոխությունները.

1) Կանոնակարգի 7-րդ կետի աղյուսակը «13.»-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր տողով.

«

14.	Կենտրոնական բանկի կողմից պահանջվող տեղեկատվության վերաբերյալ	Կենտրոնական բանկի պահանջի դեպքում

»,

2) Կանոնակարգը 16-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 16.1 կետով.

«16.1. Թիվ 14 հաշվետվությունը ներկայացվում է համաձայն Հավելված 14-ի, Կենտրոնական բանկի համապատասխան պահանջը ստանալուց հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում:»,

3) Կանոնակարգը լրացնել հետևյալ բովանդակությամբ Գլուխ 7-ով.

«ԳԼՈՒԽ 7. ՈՉ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

76. Ոչ հրապարակային ֆոնդի կառավարումն իրականացնող անձը (այդ թվում՝ լիցենզավորված կառավարիչը) Կենտրոնական բանկ է ներկայացնում հետևյալ հաշվետվությունները՝ նշված պարբերականությամբ.

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. օգոստոսի 3-ին (ՀՀԳՏ N22 (625)[1], 22.08.2018):

Հաշվետվության թիվը	Հաշվետվության անվանումը	Ներկայացման պարբերականությունը
Ոչ հրապարակային ներդրումային ֆոնդերի մասին		
15	Ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի մասնակիցների վերաբերյալ	եռամսյակային
16	Ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի ներդրումների կառուցվածքի վերաբերյալ	եռամսյակային
17	Ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի անունից ներգրավված փոխառու միջոցների վերաբերյալ	եռամսյակային

77. Սույն գլխով պահանջվող հաշվետվությունները Կենտրոնական բանկ են ներկայացվում Կենտրոնական բանկի ինտերնետային կայքի միջոցով, իսկ դրա անհնարինության դեպքում՝ էլեկտրոնային փոստով: Էլեկտրոնային եղանակով ներկայացման անհնարինության դեպքում հաշվետվությունները ներկայացվում են թղթային տարբերակով: Եթե ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի կառավարումն իրականացնող անձին տրամադրվել է Սի-Բի-էյ-նեթ համակարգ, ապա հաշվետվությունները ներկայացվում են Սի-Բի-էյ-նեթ համակարգի միջոցով:
78. Սույն գլխով պահանջվող հաշվետվությունների անվանումները կոդավորվում են հետևյալ կարգով.

ֆոնդի կոդը	գծիկ	հաշվետվության համարը	կետ	ընդլայնումը
↓	↓	↓	↓	↓
XXXXX-XXX	-	XXXX	.	

79. Եռամսյակային հաշվետվությունները ներկայացվում են մինչև հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 7-րդ աշխատանքային օրը ներառյալ:
80. Եթե հաշվետվության ներկայացման ժամկետի վերջին օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա հաշվետվության ներկայացման ժամկետի ավարտի օր է համարվում այդ օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը:
81. Հաշվետվության էլեկտրոնային տարբերակը պետք է հնարավոր լինի ընթերցել էլեկտրոնային ֆորմատով, պետք է լրացվի «Արիալ Արմենիան» տառատեսակով, երկու լրացված ամբողջական տողերի միջև դատարկ տողեր չպետք է լինեն, և այն պետք է զերծ լինի ծրագրային կամ այլ տեխնիկական թերությունից:
82. Հաշվետվությունները լրացնելիս արժեթղթերի տարբերակիչ ծածկագրերը, արժույթի ISO և այլ կոդերը ներկայացվում են անգլերեն:
83. Եթե սույն գլխով սահմանված հաշվետվության որևէ ձևով պահանջվում է լրացնել ակտիվների արժեքը կամ զուտ ակտիվների արժեքը, և ֆոնդի կանոնների համաձայն հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ տվյալ ակտիվի (ակտիվների, զուտ ակտիվների) արժեքը չի հաշվարկվում, ապա համապատասխան դաշտում լրացվում է ֆոնդի կանոնների (կանոնադրության) համաձայն հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ վերջին հաշվարկված արժեքը:
84. Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվություններում պարունակվող տեղեկությունները պետք է լինեն արժանահավատ և ամբողջական:
85. ***Թիվ 15 հաշվետվությունում*** ներկայացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի մասնակիցների վերաբերյալ տեղեկատվությունը՝ համաձայն Հավելված 15-ի: Հաշվետվությունը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.
    1) ***«Մասնակցի անունը, ազգանունը (անվանումը)»*** սյունակում լրացվում է ֆիզիկական անձ մասնակցի անունը, ազգանունը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ դրա լրիվ անվանումը:
    2) **«Անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը (պետական գրանցման համարը)»** սյունակում լրացվում է ֆիզիկական անձ մասնակցի անձը հաստատող փաստաթղթի սերիան (առկայության դեպքում) և համարը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման համարը:

3) ***«Անձի նույնականացման և ինքնության ստուգման եղանակը»*** սյունակում լրացվում է մասնակցի (նրա անունից հանդես եկող անձի) նույնականացման և ինքնության ստուգման եղանակը՝ «առերես շփմամբ», «առանց առերես շփման՝ տեսազանգ», «առանց առերես շփման՝ հեռախոսազանգ», «առանց առերես շփման՝ նամակագրություն», «առանց առերես շփման՝ այլ եղանակ»:
4) ***«Ռեզիդենտությունը (երկիրը)»*** սյունակում լրացվում է համապատասխան երկրի ISO կոդը:
5) ***«Մասնակցի մասնաբաժինը ֆոնդում (%)»*** սյունակում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ֆոնդի մասնակցի մասնաբաժինը՝ տոկոսներով, որը որոշվում է մասնակցին սեփականության իրավունքով պատկանող տվյալ ֆոնդի փայերի (բաժնետոմսերի) քանակի և տվյալ ֆոնդի տեղաբաշխված ու հետ չգնված փայերի (բաժնետոմսերի) ընդհանուր քանակի հարաբերությամբ: Եթե ֆոնդը ունի տարբեր դասի փայեր, ապա ֆոնդի մասնակցի մասնաբաժինը որոշվում է «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգով:

86. ***Թիվ 16 հաշվետվությունում*** ներկայացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի ներդրումների վերաբերյալ տեղեկատվությունը՝ ըստ յուրաքանչյուր ակտիվի, առանց խմբավորման, համաձայն Հավելված 16-ի:

87. Թիվ 16 հաշվետվությունը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.
1) Աղյուսակ 1-ում ***«Արժեթղթի տեսակը»*** սյունակում նշվում է ֆոնդի ակտիվներում ներառված արժեթղթի տեսակը՝ «բաժնետոմս», «պարտատոմս», «ներդրումային ֆոնդի փայ», «այլ բաժնային արժեթուղթ», «այլ պարտքային արժեթուղթ»:
2) ***«Արժեթղթի դասը»*** սյունակում նշվում է արժեթղթի դասը՝ «հասարակ բաժնետոմս», «արտոնյալ բաժնետոմս», «արժեկտրոնային պարտատոմս», «զեղչատոկոսային պարտատոմս», «փոխարկելի պարտատոմս», «այլ»: Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրի առկայության դեպքում սույն սյունակը չի լրացվում: Սույն սյունակը օտարերկրյա արժեթղթերի դեպքում պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից՝ արժեթղթի տարբերակիչ ծածկագիրն առկա է, թե՝ ոչ:
3) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում լրացվում է արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից այդ արժեթղթին շնորհված տարբերակիչ ծածկագիրը (առկայության դեպքում):
4) ***«Թողարկողի անվանումը»*** սյունակում լրացվում է թողարկողի լրիվ անվանումը: Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրի առկայության դեպքում սույն սյունակը չի լրացվում: Սույն սյունակը օտարերկրյա արժեթղթերի թողարկողների դեպքում պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից՝ արժեթղթի տարբերակիչ ծածկագիրն առկա է, թե՝ ոչ:
5) ***«Թողարկողի գտնվելու վայրը»*** սյունակում լրացվում է թողարկողի գտնվելու երկրի ISO կոդը: Արժեթղթերի տարբերակիչ ծածկագրի առկայության դեպքում սույն սյունակը չի լրացվում: Սույն սյունակը օտարերկրյա արժեթղթերի թողարկողների դեպքում պարտադիր լրացման ենթակա է՝ անկախ այն հանգամանքից՝ արժեթղթի տարբերակիչ ծածկագիրն առկա է, թե՝ ոչ:
6) ***«Արժույթի ISO կոդը»*** սյունակում լրացվում է այն արժույթի ISO կոդը, որով արտահայտված է տվյալ արժեթուղթը:
7) **«Արժեթղթերի քանակը»** սյունակում լրացվում է արժեթղթերի քանակը, իսկ ծավալային արժեթղթերի դեպքում լրացվում է արժեթղթերի ընդհանուր անվանական արժեքը:
8) ***«Արժեթղթի ընթացիկ շուկայական արժեքը»*** սյունակում լրացվում է արժեթղթի ընթացիկ շուկայական արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ: Ծավալային արժեթղթերի դեպքում այս սյունակը չի լրացվում:
9) ***«Արժեթղթերի ընդհանուր շուկայական արժեքը»*** սյունակում լրացվում է արժեթղթերի ընդհանուր շուկայական արժեքը, որը ոչ ծավալային արժեթղթերի դեպքում որոշվում է արժեթղթերի քանակը բազմապատկելով և արժեթղթի ընթացիկ շուկայական արժեքով:
10) ***«Տեսակարար կշիռը ֆոնդի ակտիվների նկատմամբ (%)»*** սյունակում լրացվում է արժեթղթերի տեսակարար կշիռը ֆոնդի ընդհանուր ակտիվներում՝ տոկոսով:
11) Աղյուսակ 2-ում ***«Փոխառուի անունը, ազգանունը (անվանումը)»*** սյունակում լրացվում է ֆիզիկական անձ փոխառուի անունը, ազգանունը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը:
12) ***«Փոխառության ժամկետը»*** սյունակում լրացվում է ներդրումային ֆոնդի կողմից տրամադրված փոխառության մարման փաստացի ժամկետը՝ ամիսներով:

13) ***«Փոխառության տոկոսը»*** սյունակում լրացվում է ներդրումային ֆոնդի կողմից տրամադրված փոխառության անվանական տարեկան տոկոսադրույքը:
14) ***«Արժույթի ISO կոդը»*** սյունակում լրացվում է այն արժույթի ISO կոդը, որով արտահայտված է տրամադրված փոխառությունը:
15) ***«Փոխառության ծավալը»*** սյունակում լրացվում է ներդրումային ֆոնդի կողմից տրամադրված փոխառության փաստացի մնացորդային ծավալը:
16) ***«Տեսակարար կշիռը ֆոնդի ակտիվների նկատմամբ (%)»*** սյունակում լրացվում է տրամադրված փոխառության տեսակարար կշիռը ֆոնդի ընդհանուր ակտիվներում՝ տոկոսով:
17) Աղյուսակ 3-ում ներկայացվում են ֆոնդի հաշվին ներդրված ավանդների, ինչպես նաև ֆոնդի դրամական միջոցների վերաբերյալ տեղեկությունները: Դրամական միջոցների դեպքում «Ժամկետը», «Տոկոսադրույքը» և «Համախառն գումարը» սյունակները չեն լրացվում:
18) ***«Բանկի անվանումը»*** սյունակում լրացվում է այն բանկի լրիվ անվանումը, որտեղ, որպես ավանդ, ներդրված են ներդրումային ֆոնդի դրամական միջոցները:
19) ***«Ժամկետը»*** սյունակում լրացվում է ներդրումային ֆոնդի հաշվին ներդրված ավանդի ժամկետը՝ ամիսներով:
20) ***«Տոկոսադրույքը»*** սյունակում լրացվում է ներդրումային ֆոնդի հաշվին ներդրված ավանդի տարեկան անվանական տոկոսադրույքը:
21) ***«Արժույթի ISO կոդը»*** սյունակում լրացվում է այն արժույթի ISO կոդը, որով արտահայտված է ներդրված ավանդի մայր գումարը:
22) ***«Անվանական արժեքը»*** սյունակում լրացվում է ներդրումային ֆոնդի հաշվին ներդրված ավանդի մայր գումարը:
23) ***«Համախառն գումարը»*** սյունակում լրացվում է ներդրումային ֆոնդի հաշվին ներդրված ավանդի մայր գումարի և հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ հաշվեգրված տոկոսների հանրագումարը:
24) **«Տեսակարար կշիռը ֆոնդի ակտիվների նկատմամբ (%)»** սյունակում լրացվում է ներդրված ավանդի (համախառն գումարով) տեսակարար կշիռը ֆոնդի ընդհանուր ակտիվներում՝ տոկոսով:
25) Աղյուսակ 4-ում ***«Անշարժ գույքի տեսակը»*** սյունակում լրացվում է անշարժ գույքի տեսակն ըստ օգտագործման նպատակի՝ «հող», «ծառայողական տարածքներ», «բնակելի տարածքներ», «գրասենյակային տարածքներ», «արտադրամասային տարածքներ» կամ «այլ անշարժ գույք»:
26) ***«Համախառն գնման գինը»*** սյունակում լրացվում է ներդրումային ֆոնդի հաշվին ձեռք բերված անշարժ գույքի ձեռքբերման գնի և ձեռքբերման հետ կապված ծախսերի հանրագումարը:
27) ***«Իրական արժեքը»*** սյունակում լրացվում է ներդրումային ֆոնդի հաշվին ձեռք բերված անշարժ գույքի իրական արժեքը հաշվետու ամսաթվի վերջին օրվա դրությամբ:
28) **«Տեսակարար կշիռը ֆոնդի ակտիվների նկատմամբ (%)»** սյունակում լրացվում է ձեռք բերված անշարժ գույքի (իրական արժեքով) տեսակարար կշիռը ֆոնդի ընդհանուր ակտիվներում՝ տոկոսով:
29) Աղյուսակ 5-ում ***«Ռեպո գործարքների դիրքը»*** սյունակում լրացվում է ռեպո գործարքի դիրքը՝ «ռեպո» կամ «հակադարձ ռեպո»:
30) ***«Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը»*** սյունակում լրացվում է ռեպո գործարքի հիմքում ընկած արժեթղթերի միջազգային տարբերակիչ ծածկագիրը, իսկ դրա բացակայության դեպքում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից այդ արժեթղթին շնորհված տարբերակիչ ծածկագիրը (առկայության դեպքում):
31) ***«Ռեպո գործարքի հիմքում ընկած արժեթղթերի ընթացիկ արժեքը»*** սյունակում լրացվում է ռեպո գործարքի հիմքում ընկած արժեթղթերի ընդհանուր շուկայական արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ: Եթե հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ռեպո գործարքի հիմքում ընկած արժեթղթերի ընթացիկ արժեքը չի հաշվարկվում, ապա համապատասխան դաշտում լրացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ վերջին հաշվարկված արժեքը:
32) ***«Ռեպո գործարքի արժեքը»*** սյունակում լրացվում է ռեպո (հակադարձ ռեպո) գործարքի առաջնային առքի (վաճառքի) ընդհանուր արժեքի և հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ հաշվեգրված տոկոսների հանրագումարը:
33) ***«Հարաբերակցությունը ֆոնդի ակտիվների նկատմամբ (%)»*** սյունակում լրացվում է ռեպո գործարքի արժեքի հարաբերակցությունը ֆոնդի ընդհանուր ակտիվների նկատմամբ՝ տոկոսով:

34) Աղյուսակ 6-ում ***«Ածանցյալ գործիքի տեսակը»*** սյունակում լրացվում է «ֆյուչերս», «ֆորվարդ», «գնման օպցիոն», «վաճառքի օպցիոն», «սվոփ», «գնային տարբերությունների վրա հիմնված պայմանագիր», «այլ ածանցյալ գործիք»:
35) ***«Գործարքի տեսակը»*** սյունակում լրացվում է «առք» կամ «վաճառք»:
36) ***«Ածանցյալ գործիքի հիմքում ընկած ակտիվը»*** սյունակում լրացվում է «արժեթուղթ», «արժույթ», «ինդեքս», «տոկոսադրույք», «ապրանք/հումք», «այլ ակտիվ»:
37) ***«Ածանցյալ գործիքի հիմքում ընկած ակտիվի ընդհանուր արժեքը»*** սյունակում լրացվում է ածանցյալ գործիքի հիմքում ընկած ակտիվի ընդհանուր արժեքը:
38) ***«Հարաբերակցությունը ֆոնդի ակտիվների նկատմամբ»*** սյունակում լրացվում է ածանցյալ գործիքի հիմքում ընկած ակտիվի ընդհանուր արժեքի հարաբերակցությունը ֆոնդի ընդհանուր ակտիվների նկատմամբ՝ տոկոսով:
39) Աղյուսակ 7-ում ներկայացվում են բոլոր այն ակտիվները, որոնք չեն ներկայացվել 1-ից 6-րդ աղյուսակներում:

88. ***Թիվ 17 հաշվետվությունում*** ներկայացվում է հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ոչ հրապարակային ներդրումային ֆոնդի հաշվին ներգրավված փոխառու միջոցների վերաբերյալ տեղեկատվությունը՝ ըստ յուրաքանչյուր փոխառության (պարտքային արժեթղթերի թողարկման), առանց խմբավորման, համաձայն Հավելված 17-ի:
89. Թիվ 17 հաշվետվությունը լրացվում է հետևյալ կանոններին համապատասխան.
1) Աղյուսակ 17-ում ***«Փոխատուի անունը, ազգանունը (անվանումը)»*** սյունակում լրացվում է ֆիզիկական անձ փոխատուի անունը, ազգանունը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ լրիվ անվանումը:
2) ***«Փոխատուի անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը (պետական գրանցման համարը)»*** սյունակում լրացվում է ֆիզիկական անձ փոխատուի անձը հաստատող փաստաթղթի սերիան (առկայության դեպքում) և համարը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ պետական գրանցման համարը:
3) ***«Փոխատուի նույնականացման և ինքնության ստուգման եղանակը»*** սյունակում լրացվում է փոխատուի (նրա անունից հանդես եկող անձի) նույնականացման և ինքնության ստուգման եղանակը՝ «առերես շփմամբ», «առանց առերես շփման՝ տեսազանգ», «առանց առերես շփման՝ հեռախոսազանգ», «առանց առերես շփման՝ նամակագրություն», «առանց առերես շփման՝ այլ եղանակ»:
4) ***«Փոխառության ժամկետը»*** սյունակում լրացվում է ներդրումային ֆոնդի անունից ներգրավված փոխառության մարման փաստացի ժամկետը՝ ամիսներով:
5) ***«Փոխառության տոկոսը»*** սյունակում լրացվում է ներդրումային ֆոնդի անունից ներգրավված փոխառության անվանական տարեկան տոկոսադրույքը:
6) ***«Փոխառության առարկան»*** սյունակում լրացվում է ներդրումային ֆոնդի անունից ներգրավված փոխառության առարկան: Եթե փոխառության առարկան դրամական միջոցներ են, ապա այս սյունակում լրացվում է համապատասխան արժույթի ISO կոդը:
7) ***«Փոխառության ծավալը»*** սյունակում լրացվում է ներդրումային ֆոնդի անունից ներգրավված փոխառության փաստացի մնացորդային ծավալը:
8) ***«Հարաբերակցությունը ֆոնդի զուտ ակտիվների նկատմամբ»*** սյունակում լրացվում է փոխառության փաստացի մնացորդային ծավալի հարաբերակցությունը ֆոնդի զուտ ակտիվների արժեքի նկատմամբ՝ տոկոսով:
90. Թիվ 16 և 17 հաշվետվություններում ***«Թողարկողի գտնվելու վայրը», «Իրավաբանական անձ փոխառուի գտնվելու վայրը», «Իրավաբանական անձ փոխատուի գտնվելու վայրը», «Բանկի գտնվելու վայրը», «Անշարժ գույքի գտնվելու վայրը»*** սյունակներում լրացվում է համապատասխան երկրի ISO կոդը:»,

4) Կանոնակարգի Հավելված 2-ով սահմանված թիվ 2 հաշվետվության աղյուսակում 3.15-րդ տողը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«

3.15	Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների վերագնահատումից ստացված եկամուտներ	

»,

5) Կանոնակարգի Հավելված 6-ով սահմանված Թիվ 6 հաշվետվության.
   ա. 8502-րդ և 8503-րդ տողերում «վաճառքի համար մատչելի արժեթղթեր» բառերը փոխարինել «իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ» բառերով,
   բ. 8504-րդ և 8505-րդ տողերում «մինչև մարման ժամկետը պահվող» բառերը փոխարինել «ամորտիզացված արժեքով հաշվառվող» բառերով,
6) Կանոնակարգը Հավելված 13-ից հետո լրացնել Հավելված 14-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի, և Հավելված 15-ով, Հավելված 16-ով և Հավելված 17-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի (կցվում են),
7) Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 26-ի «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 301-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 297-Ն որոշման 1-ին կետի 22-րդ ենթակետը Կանոնակարգի Հավելված 2-ով սահմանված թիվ 2 հաշվետվության աղյուսակի 3.15-րդ տողի մասով և 23-րդ ենթակետը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյան
8 օգոստոսի 2018 թ., N 136-Ն

Հավելված 1
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի օգոստոսի 3-ի
թիվ 136-Ն որոշման

Հավելված 14
Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի 2013 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 301-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից իր և իր կողմից կառավարվող ֆոնդերի մասին Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգը, ժամկետները և պարբերականությունը, կառավարչի կողմից առանձին որոշումների կայացման մասին կենտրոնական բանկին լրացուցիչ տեղեկությունների տրամադրման կարգը» կանոնակարգ 10/03-ի

Հաշվետվություն թիվ 14
(ներկայացվում է ըստ Կենտրոնական բանկի պահանջի)

1. Ֆոնդի կառավարչի (ֆոնդի կառավարումն իրականացնող անձի) անվանումը
_____

2. Հաշվետվության կազմման ամսաթիվը _____
օր/ամիս/տարի

3. ԿԲ պահանջի ամսաթիվը _____
օր/ամիս/տարի

4. ԿԲ պահանջի հակիրճ նկարագրությունը
_____
_____
_____

5. Պահանջվող տեղեկատվությունը
_____
_____
_____

Հավելված 2
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի օգոստոսի 3-ի
թիվ 136-Ն որոշման

«Հավելված 15
«Ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից իր և իր կողմից կառավարվող ֆոնդերի մասին Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգը, ժամկետները և պարբերականությունը, կառավարչի կողմից առանձին որոշումների կայացման մասին Կենտրոնական բանկին տեղեկացման կարգը»
կանոնակարգ 10/03-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 15
ՈՉ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(եռամսյակային)

Ֆոնդի անվանումը _____

Ֆոնդի կառավարումն իրականացնող անձի անվանումը _____

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթիվը _____

Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ _____

Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման ամսաթիվը _____

Մասնակցի անունը, ազգանունը (անվանումը)	Անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը (պետական գրանցման համարը)	Անձի նույնականացման և ինքնության ստուգման եղանակը	Ռեզիդենտությունը (երկիրը)	Մասնակցի մասնաբաժինը ֆոնդում (%)
1	2	3	4	5

Հավելված 16
«Ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից իր և իր կողմից կառավարվող ֆոնդերի մասին Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգը, ժամկետները և պարբերականությունը, կառավարչի կողմից առանձին որոշումների կայացման մասին Կենտրոնական բանկին տեղեկացման կարգը» կանոնակարգ 10/03-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 16
ՈՉ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(եռամսյակային)

Ֆոնդի անվանումը _____

Ֆոնդի կառավարումն իրականացնող անձի անվանումը _____

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթիվը _____

Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ _____

Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման ամսաթիվը _____

ԱՂՅՈՒՍԱԿ 1. ԱՐԺԵԹՂԹԵՐ

Արժեթղթի տեսակը	Արժեթղթի դասը	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը	Թողարկողի անվանումը	Թողարկողի գտնվելու վայրը	Արժույթի ISO կոդը	Արժեթղթերի քանակը	Արժեթղթի ընթացիկ շուկայական արժեքը	Արժեթղթերի ընդհանուր շուկայական արժեքը	Տեսակարար կշիռը ֆոնդի ակտիվների նկատմամբ (%)
1	2	3	4	5	6	7	8	9	10
Ընդամենը									

ԱՂՅՈՒՍԱԿ 2. ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Փոխառուի անունը, ազգանունը (անվանումը)	Իրավաբանական անձ փոխառուի գտնվելու վայրի երկիրը	Փոխառության ժամկետը	Փոխառության տոկոսը	Արժույթի ISO կոդը	Փոխառության գումարը	Տեսակարար կշիռը ֆոնդի ակտիվների նկատմամբ (%)
1	2	3	4	5	6	7
Ընդամենը						

ԱՂՅՈՒՍԱԿ 3. ԱՎԱՆԴՆԵՐ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ

Բանկի անվանումը	Բանկի գտնվելու վայրը	Ժամկետը	Տոկոսադրույքը	Արժույթի ISO կոդը	Անվանական արժեքը	Համախառն գումարը	Տեսակարար կշիռը ֆոնդի ակտիվների նկատմամբ (%)
1	2	3	4	5	6	7	8
Ընդամենը							

ԱՂՅՈՒՍԱԿ 4. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ

Անշարժ գույքի տեսակը	Անշարժ գույքի գտնվելու վայրը	Համախառն գնման գինը	Իրական արժեքը	Տեսակարար կշիռը ֆոնդի ակտիվների նկատմամբ (%)
1	2	3	4	5
Ընդամենը				

ԱՂՅՈՒՍԱԿ 5. ՌԵՊՈ ԳՈՐԾԱՐՔՆԵՐ

Ռեպո գործարքների դիրքը	Արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը	Ռեպո գործարքի հիմքում ընկած արժեթղթերի ընթացիկ արժեքը	Ռեպո գործարքի արժեքը	Հարաբերակցությունը ֆոնդի ակտիվների նկատմամբ (%)
1	2	3	4	5
Ընդամենը				

ԱՂՅՈՒՍԱԿ 6. ԱԾԱՆՑՅԱԼ ԳՈՐԾԻՔՆԵՐ

Ածանցյալ գործիքի տեսակը	Գործարքի տեսակը	Ածանցյալ գործիքի հիմքում ընկած ակտիվը	Ածանցյալ գործիքի հիմքում ընկած ակտիվի ընդհանուր արժեքը	Հարաբերակցությունը ֆոնդի ակտիվների նկատմամբ (%)
1	2	3	4	5
Ընդամենը				

ԱՂՅՈՒՍԱԿ 7. ԱՅԼ ԱԿՏԻՎՆԵՐ

Ակտիվի անվանումը, նկարագրությունը	Ակտիվի ընթացիկ շուկայական արժեքը	Տեսակարար կշիռը ֆոնդի ակտիվների նկատմամբ (%)
1	2	3
Ընդամենը		

Հավելված 17
«Ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից իր և իր կողմից կառավարվող ֆոնդերի մասին Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ձևերը, բովանդակությունը, ներկայացման կարգը, ժամկետները և պարբերականությունը, կառավարչի կողմից առանձին որոշումների կայացման մասին Կենտրոնական բանկին տեղեկացման կարգը» կանոնակարգ 10/03-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 17
ՈՉ ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՖՈՆԴԻ ԱՆՈՒՆԻՑ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(եռամսյակային)

Ֆոնդի անվանումը ______________________

Ֆոնդի կառավարումն իրականացնող անձի անվանումը ______________________

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ամսաթիվը ______________________

Ֆոնդի զուտ ակտիվների արժեքը հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ ______________________

Ֆոնդի զուտ ակտիվների արժեքի հաշվարկման ամսաթիվը ______________________

Փոխատուի անունը, ազգանունը (անվանումը)	Փոխատուի անձը հաստատող փաստաթղթի սերիան, համարը (պետական գրանցման համարը)	Փոխատուի նույնականացման և ինքնության ստուգման եղանակը	Իրավաբանական անձ փոխատուի գտնվելու վայրը	Փոխառության ժամկետը	Փոխառության տոկոսը	Փոխառության առարկան	Փոխառության ծավալը	Հարաբերակցությունը ֆոնդի զուտ ակտիվների նկատմամբ (%)
1	2	3	4	5	6	7	8	9
Ընդամենը								

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 357-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին**

Հաշվի առնելով Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից դրամական միջոցների հաշվառման հաշիվների վարման իրավասությունը,

նպատակ ունենալով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի համար ապահովել վերահսկողական, վիճակագրական և վերլուծական նպատակներով անհրաժեշտ տեղեկությունների ստացումը,

հիմք ընդունելով «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 182-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ կետերը և 207-րդ հոդվածի 1-ին կետը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 34-րդ հոդվածով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի դեկտեմբերի 16-ի ««Կենտրոնական դեպոզիտարիայի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/04-ը հաստատելու մասին» թիվ 357-Ն որոշմամբ հաստատված «Կենտրոնական դեպոզիտարիայի՝ Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/04-ում (այսուհետ՝ Կանոնակարգ) կատարել հետևյալ փոփոխություններն ու լրացումները.

1) Կանոնակարգի 3-րդ կետի 7-րդ ենթակետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 8-13-րդ ենթակետեր.

«8) ***«Ռեզիդենտ/ոչ ռեզիդենտ»***՝ *համաձայն սույն կանոնակարգի հավելված 13-ով սահմանված մեթոդաբանության:*

9) ***«Կանոնակարգ 5/09»***՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2012 թվականի սեպտեմբերի 18-ի ««Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից լրացուցիչ գործունեության տեսակները, դրանց իրականացման կարգը և պայմանները» կանոնակարգ 5/09-ը հաստատելու մասին» թիվ 242-Ն որոշմամբ հաստատված «Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից լրացուցիչ գործունեության տեսակները, դրանց իրականացման կարգը և պայմանները» կանոնակարգ 5/09:

10) ***«Հաշվետեր»***՝ անձ, որի համար (անունով) Կենտրոնական դեպոզիտարիայում Կանոնակարգ 5/09-ով սահմանված կարգով բացվել է դրամական միջոցների հաշվառման հաշիվ:

11) ***«Ներքին փոխանցում»***՝ դրամական միջոցների հաշվառման հաշվով (հաշիվներով) գործառնություն, որի արդյունքում տեղի է ունենում մեկ հաշվետիրոջ հաշվառման հաշվում դրամական միջոցների պակասեցում և մեկ այլ հաշվետիրոջ հաշվառման հաշվում դրամական միջոցների ավելացում:

12) ***«Արտաքին փոխանցում»***՝ դրամական միջոցների հաշվառման հաշվով գործառնություն, որի արդյունքում, հաշվետիրոջ հանձնարարականի հիման վրա, տեղի է ունենում տվյալ հաշվետիրոջ դրամական միջոցների հաշվառման հաշվում հաշվառված և Կանոնակարգի 5/09-ի 18-րդ կետով սահմանված ֆինանսական կազմակերպությունների մոտ բացված հաշիվներում առկա դրամական միջոցների փոխանցում՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից չվարվող այլ հաշվի:

13) ***«Արտաքին համալրում»***՝ դրամական միջոցների հաշվառման հաշվով գործառնություն, որի արդյունքում տեղի է ունենում Կանոնակարգ 5/09-ի 18-րդ կետով սահմանված ֆինանսական կազմակերպությունների մոտ բացված հաշիվներին համալրում՝ հաշվետիրոջ հաշվին դրամական միջոցների փոխանցման արդյունքում:»,

2) Կանոնակարգի 5-րդ կետով սահմանված աղյուսակում՝

ա. «13»-րդ տողում «շաբաթական» բառը փոխարինել «շաբաթական, ամսական» բառերով,

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2018 թ. օգոստոսի 3-ին (ՀՀԳՏ N22 (625)[1], 22.08.2018):

բ. «13»-րդ տողից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ 14-17-րդ տողեր.

«

14	Հաշվետվություն Կենտրոնական դեպոզիտարիայում հաշվետերերին պատկանող դրամական միջոցների հաշվառման վերաբերյալ	շաբաթական, տարեկան
15	Հաշվետվություն հաշվետերերին պատկանող դրամական միջոցների հաշվառման հաշիվներով կատարված գործառնությունների վերաբերյալ	շաբաթական, տարեկան
16	Հաշվետվություն Ն1 նորմատիվի վերաբերյալ	ամսական
17	Հաշվետվություն Ն2 նորմատիվի վերաբերյալ	ամսական

»,

3) *Կանոնակարգի 6-րդ կետում «8» թիվը փոխարինել «12» թվով,*
4) *Կանոնակարգի 29-րդ կետում* `
   ա. 3-րդ ենթակետում «արդյունքում փոխանցման» բառերից հետո լրացնել «դեպքում, «տեղաբաշխում»՝ արժեթղթերի տեղաբաշխման» բառերը,
   բ. 3-րդ կետից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր 3.1 ենթակետ,
   «3.1) «Վերջնահաշվարկի տեսակը» սյունակում նշվում է «առաքում վճարման դիմաց», «ազատ առաքում» կամ «ազատ առաքում՝ համաձայնությամբ»՝ կախված վերջնահաշվարկի արդյունքում արժեթղթերի փոխանցման ձևից:»,
5) *Կանոնակարգի 37-րդ կետում* `
   ա) «ամսվա» բառից առաջ լրացնել «շաբաթվա և» բառերը,
   բ) «վերջի դրությամբ:» բառերից հետո լրացնել «Սույն հաշվետվության համաձայն՝ տեղեկությունները լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ժամը 24:00-ի դրությամբ:» նախադասություն,
6) Կանոնակարգը 13-րդ գլխից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ՝ 14-17-րդ գլուխներով.

«ԳԼՈՒԽ 14. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԴԵՊՈԶԻՏԱՐԻԱՅՈՒՄ ՀԱՇՎԵՏԵՐԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 14 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

39. Թիվ 14 հաշվետվությունում լրացվում են այն հաշվետերերին պատկանող դրամական միջոցների հաշվառման հաշիվների վերաբերյալ տեղեկությունները, որոնց համար Կենտրոնական դեպոզիտարիայում բացվել են դրամական միջոցների հաշվառման հաշիվներ: Հաշվետվությունը լրացվում է այն արժույթով (ՀՀ դրամով, դոլարով և այլն)՝ ամբողջական միավորներով, որով արտահայտված են հաշվետերերի դրամական միջոցները: Սույն հաշվետվության համաձայն՝ տեղեկությունները լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա ժամը 24:00-ի դրությամբ:

40. Թիվ 14 հաշվետվությունը բաղկացած է 2 աղյուսակից, որոնք լրացվում են սույն կանոնակարգի 41-46-րդ կետերի համաձայն:

41. Թիվ 14 հաշվետվության 1-ին աղյուսակում լրացվում են Կենտրոնական դեպոզիտարիայում հաշվառվող դրամական միջոցների վերաբերյալ ամփոփ տեղեկությունները:

42. Թիվ 14 հաշվետվության 1-ին աղյուսակը լրացվում է Կենտրոնական դեպոզիտարիայի դրամական միջոցների հաշվառման համակարգում առկա տեղեկատվության հիման վրա:

43. Թիվ 14 հաշվետվության 1-ին աղյուսակը լրացվում է հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) ***«Հաշվետիրոջ տեսակը»*** սյունակում նշվում է «ենթապահառու», «հաշվի օպերատոր», «կենսաթոշակային ֆոնդ» «ներդրումային այլ ֆոնդ» կամ «հաշվարկային համակարգի այլ անդամ»: Եթե հաշվետերը միևնույն ժամանակ և՛ հաշվի օպերատոր է, և՛ ենթապահառու, ապա հաշվետվությունում նշվում է ենթապահառու:
2) ***«Հաշվետիրոջ ռեզիդենտությունը»*** սյունակում նշվում է «ռեզիդենտ», եթե հաշվետերը ռեզիդենտ է, կամ «ոչ ռեզիդենտ», եթե հաշվետերը ոչ ռեզիդենտ է:
3) ***«Հաշվի տեսակը»*** սյունակում լրացվում է «սեփական» կամ «հաճախորդների ամփոփ»:
4) ***«Արժույթի ԻՍՕ կոդը»*** սյունակում լրացվում է այն արժույթի ԻՍՕ կոդը, որով արտահայտված են հաշվետերերի դրամական միջոցները:
5) ***«Հաշվառման հաշվում առկա դրամական միջոցների ծավալը»*** սյունակում լրացվում է Կենտրոնական դեպոզիտարիայի հաշվառման հաշվում հաշվառվող դրամական միջոցների գումարը:
6) ***«Դրամական միջոցները պահող ֆինանսական կազմակերպության տեսակը»*** սյունակում նշվում է «ՀՀ Կենտրոնական բանկ», «ՀՀ առևտրային բանկեր», «օտարերկրյա կենտրոնական դեպոզիտա-

րիաներ», «օտարերկրյա բանկեր» կամ «այլ»: Սյունակը լրացվում է կախված նրանից, թե Կենտրոնական դեպոզիտարիան որտեղ է պահում իր հաշվետերերի դրամական միջոցները:

44. Թիվ 14 հաշվետվության 2-րդ աղյուսակում լրացվում են Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ֆինանսական կազմակերպությունների մոտ պահվող դրամական միջոցների վերաբերյալ ամփոփ տեղեկությունները:

45. Թիվ 14 հաշվետվության 2-րդ աղյուսակը լրացվում է՝ հիմք ընդունելով ֆինանսական կազմակերպություններում Կենտրոնական դեպոզիտարիայի հաշվի մնացորդների վերաբերյալ քաղվածքները:

46. Թիվ 14 հաշվետվության 2-րդ աղյուսակը լրացվում է հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) ***«Ֆինանսական կազմակերպության տեսակը»*** սյունակում նշվում է «ՀՀ կենտրոնական բանկ», «ՀՀ առևտրային բանկեր», «օտարերկրյա կենտրոնական դեպոզիտարիաներ», «օտարերկրյա բանկեր» կամ «այլ»: Սյունակը լրացվում է կախված նրանից, թե Կենտրոնական դեպոզիտարիան որտեղ է պահում իր հաշվետերերի դրամական միջոցները:
2) ***«Արժույթի ԻՍՕ կոդը»*** սյունակում լրացվում է այն արժույթի ԻՍՕ կոդը, որով արտահայտված են նշված տեսակի ֆինանսական կազմակերպությունների մոտ պահվող Կենտրոնական դեպոզիտարիայի հաշվում առկա դրամական միջոցները: Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից միևնույն տեսակի մի քանի ֆինանսական կազմակերպությունների մոտ պահվող դրամական միջոցները, որոնք արտահայտված են նույն արժույթով, լրացվում են մեկ տողով: Նույն տեսակի ֆինանսական կազմակերպության մոտ տարբեր արժույթներով պահվող դրամական միջոցների մասին տեղեկատվությունը լրացվում է մի քանի տողով՝ կախված արժույթների քանակից:
3) ***«Դրամական միջոցների ծավալը»*** սյունակում լրացվում է նշված տեսակի ֆինանսական կազմակերպությունների մոտ պահվող դրամական միջոցների գումարը:

ԳԼՈՒԽ 15. ՀԱՇՎԵՏԵՐԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՇԻՎՆԵՐՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՐԾԱՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 15 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

47. Թիվ 15 հաշվետվությունում լրացվում են դրամական միջոցների հաշվառման հաշիվներով կատարված գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները: Հաշվետվությունը լրացվում է այն արժույթով (ՀՀ դրամով, դոլարով և այլն)՝ ամբողջական միավորներով, որով իրականացվում է գործառնությունը:

48. Թիվ 15 հաշվետվության տեղեկությունները լրացվում են հաշվետու ժամանակաշրջանի՝ վերջին օրվա ժամը 24:00-ի դրությամբ:

49. Թիվ 15 հաշվետվության իմաստով գործառնություն է համարվում Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից հաշվետերերի հաշվառման հաշիվներում կատարած գրառումը, որը վերաբերում է դրամական միջոցների ավելացմանը, պակասեցմանը կամ դրանց նկատմամբ իրավունքի սահմանափակմանը: Դրամական միջոցների դեպոնացումների և ապադեպոնացումների վերաբերյալ տեղեկությունները հաշվետվությունում չեն արտացոլվում:

50. Թիվ 15 հաշվետվությունը բաղկացած է 5 աղյուսակից:

51. Թիվ 15 հաշվետվության սյունակները լրացվում են հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Օգտագործվող համակարգը»*** սյունակում նշվում է «ԿԴ ներքին համակարգ», «Ս.Վ.Ի.Ֆ.Թ.», «թղթային» կամ «այլ»: Բացառություն են կազմում 1-ին աղյուսակի «Օգտագործվող համակարգը» սյունակը, որտեղ, բացի սույն ենթակետում նշված տարբերակներից, կարող է նշվել նաև «ՀՀ ԿԲ էլեկտրոնային վճարումների համակարգ»: Այս սյունակներում նշվում է այն տեխնիկածրագրային համակարգը, որը հիմք է հանդիսացել Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից համապատասխան գործառնությունն իրականացնելու համար:

   Օրինակ՝ եթե համակարգի անդամը ներքին փոխանցում իրականացնելու համար Կենտրոնական դեպոզիտարիային տալիս է հաղորդագրություն Կենտրոնական դեպոզիտարիայի ներքին համակարգով կամ Ս.Վ.Ի.Ֆ.Թ.-ով, ապա սյունակում լրացվում է համապատասխանաբար «ԿԴ ներքին համակարգ» կամ «Ս.Վ.Ի.Ֆ.Թ.»: Եթե Կենտրոնական դեպոզիտարիան ստանում է հաշվառման հաշիվների արտաքին համալրման կամ հաշիվներից արտաքին փոխանցման վերաբերյալ

հաստատում գործընկեր ֆինանսական կազմակերպությունից ՀՀ ԿԲ էլեկտրոնային վճարումների համակարգով կամ Ս.Վ.Ի.Ֆ.Թ.-ով, ապա սյունակում նշվում է համապատասխանաբար «ՀՀ ԿԲ էլեկտրոնային վճարումների համակարգ» կամ «Ս.Վ.Ի.Ֆ.Թ.»:

2) ***«Ֆինանսական կազմակերպության տեսակը»*** սյունակում նշվում է այն ֆինանսական կազմակերպության տեսակը, որտեղ պահվում են Կենտրոնական դեպոզիտարիայում հաշվառված դրամական միջոցները: Այս սյունակում նշվում է «ՀՀ կենտրոնական բանկ», «ՀՀ առևտրային բանկեր», «միջազգային ԿԴ» (միջազգային կենտրոնական դեպոզիտարիաներ), «օտարերկրյա բանկեր» և «այլ»:
3) ***«Գործառնության գումարը»*** սյունակում լրացվում է գործառնության գումարն այն արժույթով, որով իրականացվել է գործառնությունը:
4) ***«Արժույթի ԻՍՕ կոդը»*** սյունակում լրացվում է այն արժույթի ԻՍՕ կոդը, որով արտահայտված է գործառնությունը:
5) ***«Գործարքի քանակը»*** սյունակում լրացվում է տվյալ աղյուսակի տվյալ տողում լրացված նույն բնութագրիչներն ունեցող գործարքների քանակը:

52. Ի լրումն սույն կանոնակարգի 47-51-րդ կետերով սահմանված լրացման կանոնների՝ Թիվ 15 հաշվետվության յուրաքանչյուր աղյուսակի լրացման համար պետք է պահպանվեն նաև սույն կանոնակարգի 53-63-րդ կետերով սահմանված լրացման լրացուցիչ կանոնները:

53. Թիվ 15 հաշվետվության 1-ին աղյուսակում լրացվում են արժեթղթերի առաքման դիմաց վճարման հիմքով իրականացված գործառնությունների վերաբերյալ ամփոփ տեղեկությունները:

54. Թիվ 15 հաշվետվության 1-ին աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) ***«Գործառնության եղանակը»*** սյունակում նշվում է «ներքին փոխանցում», «արտաքին փոխանցում» կամ «արտաքին համալրում»՝ կախված նրանից, թե գործառնությունը Կենտրոնական դեպոզիտարիայի համար ինչպիսին է համարվում:
2) ***«Գործարքի կնքման վայրը»*** սյունակը լրացվում է հետևյալ կերպ. եթե արժեթղթերի գործարքը (DVP-delivery versus payment) կնքվել է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող կարգավորվող շուկայում, և այդ տեղեկատվությունը հայտնի է Կենտրոնական դեպոզիտարիային, ապա նշվում է «օտարերկրյա կարգավորվող շուկա», մնացած դեպքերում նշվում է «չկարգավորվող շուկա»:

55. Թիվ 15 հաշվետվության 2-րդ աղյուսակում լրացվում են վճարում վճարման դիմաց (PVP-payment versus payment) գործառնությունների վերաբերյալ ամփոփ տեղեկությունները:

56. Թիվ 15 հաշվետվության 2-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) ***«Օգտագործվող համակարգը-Ի»*** սյունակում նշվում է «ԿԴ ներքին համակարգ», «Ս.Վ.Ի.Ֆ.Թ.», «թղթային» կամ «այլ»: Այս սյունակում լրացվում է այն տեխնիկածրագրային համակարգը, որը հիմք է հանդիսացել Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից վճարում՝ վճարման դիմաց գործառնությանը մասնակից առաջին կողմի ներքին փոխանցումը իրականացնելու համար:
2) ***«Օգտագործվող համակարգը-ԻԻ»*** սյունակում նշվում է «ԿԴ ներքին համակարգ», «Ս.Վ.Ի.Ֆ.Թ.», «թղթային» կամ «այլ»: Այս սյունակում լրացվում է այն տեխնիկածրագրային համակարգը, որը հիմք է հանդիսացել Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից վճարում՝ վճարման դիմաց գործառնությանը մասնակից երկրորդ կողմի ներքին փոխանցումը իրականացնելու համար:
3) ***«Ֆինանսական կազմակերպության տեսակը-Ի»*** սյունակում նշվում է «ՀՀ կենտրոնական բանկ», «ՀՀ առևտրային բանկեր», «միջազգային ԿԴ» (միջազգային կենտրոնական դեպոզիտարիաներ), «օտարերկրյա բանկեր» և «այլ»: Այս սյունակում նշվում է այն ֆինանսական կազմակերպության տեսակը, որտեղ փաստացի պահվում են վճարում՝ վճարման դիմաց գործառնությանը մասնակից առաջին կողմի դրամական միջոցները:
4) **«Ֆինանսական կազմակերպության տեսակը-ԻԻ»** սյունակում նշվում է «ՀՀ կենտրոնական բանկ», «ՀՀ առևտրային բանկեր», «միջազգային ԿԴ» (միջազգային կենտրոնական դեպոզիտարիաներ), «օտարերկրյա բանկեր» և «այլ»: Այս սյունակում նշվում է այն ֆինանսական կազմակերպության տեսակը, որտեղ փաստացի պահվում են վճարում՝ վճարման դիմաց գործառնությանը մասնակից երկրորդ կողմի դրամական միջոցները:
5) ***«Արժութային զույգի ԻՍՕ կոդերը»*** սյունակում լրացվում է վճարում՝ վճարման դիմաց գործառնությանը մասնակցող արժույթների ԻՍՕ կոդերը: Օրինակ՝ երբ գործառնության հետևանքով կողմերի միջև փոխանցվում է ՀՀ դրամ և ԱՄՆ դոլար, լրացվում է «AMD/USD» կամ «USD/AMD»՝ կախված նրանից, թե տվյալ տողը լրացնելու համար որ արժույթն է համարվում առաջին և երկրորդ:

6) ***«Առաջին արժույթի ծավալը»*** սյունակում լրացվում է գործառնությանը մասնակից առաջին արժույթի ծավալը:
7) ***«Երկրորդ արժույթի ծավալը»*** սյունակում լրացվում է գործառնությանը մասնակից երկրորդ արժույթի ծավալը:

57. Թիվ 15 հաշվետվության 3-րդ աղյուսակում լրացվում են փոխարկման արդյունքում (FX-foreign exchange) արտաքին փոխանցման և արտաքին համալրման գործառնությունների վերաբերյալ ամփոփ տեղեկությունները:

58. Թիվ 15 հաշվետվության 3-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) ***«Արժութային զույգի ԻՍՕ կոդերը»*** սյունակում լրացվում են փոխարկման արդյունքում արտաքին փոխանցման և արտաքին համալրման գործառնությանը մասնակցող արժույթների ԻՍՕ կոդերը: Առաջինը նշվում է արտաքին փոխանցման արժույթի ԻՍՕ կոդը, երկրորդը՝ արտաքին համալրման: Օրինակ՝ երբ գործառնության հետևանքով հաշվառման հաշվից փոխանցվում է ՀՀ դրամ, և հաշիվը համալրվում է ԱՄՆ դոլարով, լրացվում է «AMD/USD»:
2) ***«Առաջին արժույթի ծավալը (արտաքին փոխանցում)»*** սյունակում լրացվում է արտաքին փոխանցմանը մասնակցող արժույթի ԻՍՕ կոդը:
3) ***«Երկրորդ արժույթի ծավալը (արտաքին համալրում)»*** սյունակում լրացվում է արտաքին համալրմանը մասնակցող արժույթի ԻՍՕ կոդը:

59. Թիվ 15 հաշվետվության 4-րդ աղյուսակում լրացվում են գրավադրման և հարկադիր արգելադրման գործառնությունների վերաբերյալ ամփոփ տեղեկությունները:

60. Թիվ 15 հաշվետվության 4-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) ***«Գործառնության եղանակը»*** սյունակում նշվում է «արտաքին փոխանցում» կամ «իրավունքի սահմանափակում»՝ կախված նրանից, թե գործառնությունը Կենտրոնական դեպոզիտարիայի համար ինչպիսին է համարվում:
2) ***«Գործառնության տեսակը»*** սյունակում նշվում են «հարկադիր արգելադրում» գործառնության կատարման համար դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշումների վճիռները կամ դատական ակտերի հարկադիր կատարողի որոշումները հիմք ընդունելու դեպքում կամ «գրավադրում»՝ հաշվետերերի գրավադրման հանձնարարականների կատարման դեպքում:

61. Թիվ 15 հաշվետվության 5-րդ աղյուսակում լրացվում է Կենտրոնական դեպոզիտարիայի դրամական միջոցների հաշվառման հաշիվներով իրականացվող այն գործառնությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որը չի ներառվել սույն հաշվետվության 1-4 աղյուսակներում:

62. Թիվ 15 հաշվետվության 5-րդ աղյուսակում յուրաքանչյուր գործառնություն լրացվում է առանձին տողով:

63. Թիվ 15 հաշվետվության 5-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման կանոններին համապատասխան.

1) ***«Գործառնության ծածկագիրը»*** սյունակում լրացվում է գործառնության գրառման համար Համակարգի կողմից ստեղծված գործառնության առանձնահատուկ նույնականացուցիչ համարը:
2) ***«Գործառնության եղանակը»*** սյունակում նշվում է «ներքին փոխանցում», «արտաքին փոխանցում» կամ «արտաքին համալրում»՝ կախված նրանից, թե գործառնությունը Կենտրոնական դեպոզիտարիայի համար ինչպիսին է համարվում:
3) ***«Գործառնության տեսակը»*** սյունակում նշվում է «ազատ փոխանցում», եթե գործառնությունը ազատ փոխանցման հիմքով է, կամ «այլ»՝ այլ դեպքերում (օրինակ՝ առանց հանձնարարականի դրամական միջոցների նվազեցում, այդ թվում՝ սխալմամբ մուտքագրված միջոցների վերադարձ):
4) ***«Հանձնարարականի տրման ամսաթիվը»*** սյունակում լրացվում է Համակարգի անդամի կողմից հաշվառման հաշիվներով գործարքի կատարման համար տրված հանձնարարականի ամսաթիվը՝ առկայության դեպքում:
5) ***«Գործառնության ժամը»*** սյունակում լրացվում է հաշվետու օրվա ընթացքում իրականացված գործառնության ժամը՝ Հայաստանի Հանրապետության ժամանակով: Գործառնության ժամը նշվում է հետևյալ կերպ. ժամ:րոպե:վայրկյան (14:50:55):
6) ***«Գործառնության նպատակը»*** սյունակում լրացվում է այն տեղեկությունը, որը Համակարգի անդամի կողմից նշվում է համապատասխան հանձնարարականում կամ արտաքին համալրման/փոխանցման գործառնության դեպքում ներառված է հանձնարարականի հաղորդագրության համապատասխան դաշտում:

7) ***«Հաշվի համարը»*** ենթասյունակում լրացվում են համապատասխանաբար գործառնության նախաձեռնող և հակադարձ կողմերի հաշվի համարները (հայտնի լինելու դեպքում):
8) ***«Ռեզիդենտությունը»*** ենթասյունակում նշվում է «ռեզիդենտ» կամ «ոչ ռեզիդենտ»՝ հայտնի լինելու դեպքում:

ԳԼՈՒԽ 16. Ն1 ՆՈՐՄԱՏԻՎԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 16 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

64. Թիվ 16 հաշվետվությունում ներկայացվում են ընդհանուր կապիտալի և ռիսկով կշռված ակտիվների միջև սահմանային հարաբերակցության՝ Ն1 նորմատիվի վերաբերյալ տեղեկությունները, որոնք հաշվարկվում են Կանոնակարգ 5/09-ով սահմանված կարգով: Այն օրերին, երբ Կենտրոնական դեպոզիտարիայի հաշվետվությունը փոփոխություն չի կրել (ներառյալ ոչ աշխատանքային օրերը), սույն հաշվետվությունում լրացվում են նախորդ օրվա տվյալները: Եթե Կենտրոնական դեպոզիտարիան Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն և իր հաշվապահական հաշվառման քաղաքականությամբ նախատեսված լինելու դեպքում ձևավորել է պահուստներ, ապա տվյալ պահուստների մեծությունը նույնպես լրացվում է հաշվետվությունում:

65. Թիվ 16 հաշվետվությունը բաղկացած է 16 աղյուսակներից, որոնք լրացվում են սույն կանոնակարգի 66-95-րդ կետերի համաձայն:

66. Թիվ 16 հաշվետվության 1-ին աղյուսակում ներկայացվում և ամփոփվում են Ն1 նորմատիվի հաշվարկին մասնակցող ամսվա միջին օրական ցուցանիշներն ու նորմատիվ փաստացի մեծությունը՝ հաշվարկված համաձայն Կանոնակարգ 5/09-ի: 1-ին աղյուսակի 1-5-րդ սյունակներում ամփոփվում են, համապատասխանաբար՝ ընդհանուր կապիտալի, վարկային ռիսկի, արտարժութային ռիսկի, տոկոսադրույքի ռիսկի, բաժնային արժեթղթերի գնային ռիսկի նորմատիվային ամսվա միջին օրական մեծությունները, իսկ 6-րդ սյունակում՝ գործառնական ռիսկի նորմատիվային մեծությունը: 2-րդ սյունակի վարկային ռիսկի հաշվարկն իրականացվում է սույն հաշվետվության 3, 4, 5, 6, 7, 8 աղյուսակների համաձայն: 3-րդ սյունակի արտարժութային ռիսկի հաշվարկն իրականացվում է 9-րդ և 10-րդ աղյուսակների համաձայն, 4-րդ սյունակի տոկոսադրույքի ռիսկի հաշվարկն իրականացվում է 12-րդ և 13-րդ սյունակների համաձայն, 5-րդ սյունակի բաժնային արժեթղթերի գնային ռիսկի հաշվարկն իրականացվում է 14-րդ աղյուսակի համաձայն, իսկ 6-րդ սյունակի գործառնական ռիսկի հաշվարկը՝ 15-րդ կամ 16-րդ աղյուսակների համաձայն:

67. Թիվ 16 հաշվետվության 2-րդ աղյուսակում ներկայացվում են ընդհանուր կապիտալի հաշվեկշռային և նորմատիվային մեծությունները՝ ըստ ամսվա բոլոր օրերի, ինչպես նաև նորմատիվային կապիտալի հաշվարկի համար Կանոնակարգ 5/09-ով նախատեսված անհրաժեշտ նվազեցումները. այս նվազեցումները լրացվում են բացարձակ արժեքով:

68. Թիվ 16 հաշվետվության 3-րդ աղյուսակում ներկայացվում է վարկային ռիսկի հաշվարկը՝ ըստ օրերի: 3-րդ աղյուսակում չեն ներկայացվում այն ակտիվները, որոնց վրա տարածվում է վարկային ռիսկի զսպման մեխանիզմը (այսուհետ՝ ՎՌԶՄ): 3-րդ աղյուսակի 1-ին, 3-րդ, 5-րդ, 7-րդ, 9-րդ, 11-րդ, 13-րդ, 15-րդ, 17-րդ և 19-րդ սյունակներում լրացվում են ըստ ռիսկի կշիռների խմբավորված ակտիվների հանրագումարները՝ հազար դրամներով, իսկ 2-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 10-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ, 18-րդ և 20-րդ սյունակներում՝ համապատասխան ռիսկի կշիռ ունեցող ակտիվների հնարավոր կորուստների պահուստների մեծությունները՝ հազար դրամներով: 21-րդ սյունակում ամփոփվում է այն ակտիվների գծով վարկային ռիսկը, որոնց վրա չի տարածվում ՎՌԶՄ-ն:

69. Թիվ 16 հաշվետվության 4-րդ աղյուսակում լրացվում է ՎՌԶՄ ենթակա ակտիվների գծով վարկային ռիսկի հաշվարկն՝ ըստ օրերի: 4-րդ աղյուսակում ներկայացվում են այն ակտիվները, որոնց մեծությունը, համաձայն Կանոնակարգ 5/09-ի, չի ճշգրտվում արժեքի տատանման գործակիցներով:

70. Թիվ 16 հաշվետվության 4-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) ***«ՎՌԶՄ ենթակա ակտիվների ընդհանուր գումարը»*** սյունակում լրացվում է ՎՌԶՄ ենթակա ակտիվների ընդհանուր գումարը՝ հազար դրամներով:
2) ***«Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ»*** սյունակում լրացվում է ՎՌԶՄ ենթակա ակտիվների գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստի մեծությունը՝ բացարձակ արժեքով, հազար դրամներով:
3) ***«Ակտիվների մեծությունը, որոնց ռիսկի կշիռը ՎՌԶՄ կիրառման արդյունքում փոխվել է»*** սյունակում լրացվում է ՎՌԶՄ ենթակա ակտիվների այն մեծությունը՝ հազար դրամներով, որոնց ռիսկի կշիռը ՎՌԶՄ կիրառման արդյունքում փոխվել է:
4) ***«ՎՌԶՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը»*** սյունակում լրացվում է ՎՌԶՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը:

5) 5-14-րդ սյունակներում լրացվում են ակտիվների մեծությունները՝ հազար դրամներով, ըստ ռիսկի կշիռների՝ համապատասխան հնարավոր կորուստների պահուստի չափով նվազեցնելուց հետո: Ակտիվի ապահովված մասն արտացոլվում է ապահովվածության (կամ ապահովվածություն տրամադրող անձի) ռիսկի կշռին համապատասխան սյունակում, իսկ չապահովված մասը՝ փոխառուի/գործիքի ռիսկի կշռին համապատասխան սյունակում:

Օրինակ՝ ենթադրենք, փոխառության մեծությունը 100 դրամ է, ենթադրենք՝ պահուստը՝ 10 դրամ, փոխառուի ռիսկի կշիռը՝ 100 տոկոս: Փոխառության գծով առկա է ֆինանսական գրավ, որի ճշգրտված արժեքը 60 դրամ է: Ֆինանսական գրավի ռիսկի կշիռը 50 տոկոս է: Այս օրինակում փոխառության հաշվեկշռային արժեքն արտացոլվում է 1-ին սյունակում՝ 100 դրամի չափով, պահուստը 10 դրամ է, որն արտացոլվում է 2-րդ սյունակում: 3-րդ սյունակում կլրացվի 60 դրամ, իսկ 4-րդ՝ «ՎՌՁՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը» սյունակում, լրացվում է 60*(100%-50%)=30 դրամ (որտեղ 60-ը այն մեծությունն է, որի ռիսկի կշիռը փոխվում է ՎՌՁՄ կիրառելիս, 100 տոկոսը ակտիվի ռիսկի կշիռն է մինչև ՎՌՁՄ կիրառելը, իսկ 50 տոկոսը՝ ակտիվի նոր ռիսկի կշիռն ՎՌՁՄ կիրառման արդյունքում): Միևնույն ժամանակ, փոխառության ապահովված մասը՝ 60 դրամը, պետք է լրացնել 9-րդ սյունակում: Իսկ փոխառության չապահովված մասը ((100-10)-60=30-ը) պետք է արտացոլել 11-րդ սյունակում՝ 30 դրամ գումարի չափով:

6) 15-րդ սյունակում ամփոփվում է ՎՌՁՄ ենթակա այն ակտիվների գծով վարկային ռիսկը, որոնց մեծությունը չի ճշգրտվում արժեքի տատանման գործակիցներով:

71. Թիվ 16 հաշվետվության 5-րդ աղյուսակում լրացվում է ՎՌՁՄ ենթակա ակտիվների գծով վարկային ռիսկի հաշվարկն ըստ օրերի: Սույն աղյուսակում լրացվում են միայն այն ակտիվները, որոնց մեծությունները, համաձայն Կանոնակարգ 5/09-ի, ճշգրտվում են արժեքի տատանման գործակիցներով (օրինակ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի կողմից թողարկված պարտատոմսեր):

72. Թիվ 16 հաշվետվության 5-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) ***«ՎՌՁՄ ենթակա ակտիվների ընդհանուր գումարը»*** սյունակում լրացվում է ՎՌՁՄ ենթակա ակտիվների ընդհանուր գումարը՝ հազար դրամներով:
2) ***«Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ»*** սյունակում՝ ՎՌՁՄ ենթակա ակտիվների գծով ձևավորված հնարավոր կորուստների պահուստի մեծությունը բացարձակ արժեքով՝ հազար դրամներով:
3) ***«Ակտիվների մեծությունը, որոնց ռիսկի կշիռը ՎՌՁՄ կիրառման արդյունքում փոխվել է»*** սյունակում լրացվում է ՎՌՁՄ ենթակա ակտիվների այն մեծությունը՝ հազար դրամներով, որոնց ռիսկի կշիռը ՎՌՁՄ կիրառման արդյունքում փոխվել է:
4) ***«ՎՌՁՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը»*** սյունակում լրացվում է ՎՌՁՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը:
5) 5-14-րդ սյունակներում լրացվում են ակտիվների մեծություններն, ըստ ռիսկի կշիռների, համապատասխան հնարավոր կորուստների պահուստի չափով նվազեցնելուց և արժեքի տատանման գործակցով ճշգրտելուց հետո: Ակտիվի ապահովված մասն արտացոլվում է ապահովվածության (կամ ապահովվածություն տրամադրող անձի) ռիսկի կշռին համապատասխան սյունակում, իսկ չապահովված մասը՝ փոխառուի/գործիքի ռիսկի կշռին համապատասխան սյունակում:

Օրինակ, ենթադրենք՝ Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ձեռք բերված A+ վարկանիշ ունեցող օտարերկրյա բանկի կողմից թողարկված պարտատոմսի հաշվեկշռային արժեքը 100 դրամ է, մարմանը մնացած ժամկետը՝ 3 տարի: Պարտատոմսի արժեքի տատանման գործակիցը 6 տոկոս է, պահուստը, ենթադրենք, 50 դրամ, պարտատոմսի ռիսկի կշիռը 50 տոկոս է: Պարտատոմսի գծով առկա է ապահովվածություն (Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից A+ վարկանիշ ստացած ոչ բանկ կազմակերպության կողմից տրված երաշխիք)՝ 30 դրամ գումարի չափով, որի ռիսկի կշիռը 20 տոկոս է: Այս օրինակում պարտատոմսի հաշվեկշռային արժեքն արտացոլվում է առաջին սյունակում՝ 100 դրամի չափով, 50 դրամ պահուստը՝ 2-րդ սյունակում: 3-րդ սյունակում կլրացվի 30 դրամ, իսկ 4-րդ-ում՝ 30*(50%-20%)=9 դրամ (որտեղ 30-ը այն մեծությունն է, որի ռիսկի կշիռը փոխվում է ՎՌՁՄ կիրառելիս, 50 տոկոսը ակտիվի ռիսկի կշիռն է մինչև ՎՌՁՄ կիրառելը, իսկ 20 տոկոսը՝ ՎՌՁՄ կիրառման արդյունքում ստացվող ակտիվի նոր ռիսկի կշիռը): Պարտատոմսի ապահովված մասը՝ 30 դրամը, պետք է լրացնել 7-րդ սյունակում: Պարտատոմսի չապահովված մասը՝ (100-50)*(1+6%)-30=23 դրամը, պետք է արտացոլել 9-րդ սյունակում:

6) 15-րդ սյունակում ամփոփվում է ՎՌՁՄ ենթակա այն ակտիվների գծով վարկային ռիսկը, որոնց մեծությունը ճշգրտվում է արժեքի տատանման գործակիցներով:

73. Թիվ 16 հաշվետվության 6-րդ աղյուսակում ներկայացվում են Կանոնակարգ 5/09-ի համաձայն վարկային ռիսկի հաշվարկում ներառվող այն հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների և տրամադրված երաշխավորությունների վարկային ռիսկի հաշվարկներն ըստ օրերի, որոնց վրա չեն տարածվում ՎՌՁՄ-ները:

74. Թիվ 16 հաշվետվության 6-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) ***«Հետհաշվեկշռային ածանցյալ գործիքներ (դրամային հոդվածներ)»*** և ***«Հետհաշվեկշռային ածանցյալ գործիքներ (արտարժութային հոդվածներ)»*** սյունակներում լրացվում է հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների մեծությունը՝ հետհաշվեկշռում արտացոլված արժեքի չափով՝ հազար դրամներով:
2) ***«Երաշխավորություններ»*** սյունակում լրացվում է տրամադրված երաշխավորությունների մեծությունը՝ հետհաշվեկշռում արտացոլված արժեքի չափով՝ հազար դրամներով:
3) ***«Պահուստ»*** սյունակում լրացվում է հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների կամ տրամադրված երաշխավորությունների գծով ձևավորված պահուստի մեծությունը՝ հազար դրամներով:
4) ***«Վարկային ռիսկի մեծությունը ՎՌՓԳ կիրառումից հետո»*** սյունակում լրացվում է վարկային ռիսկի փոխարկման գործոնների կիրառումից հետո հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների կամ տրամադրված երաշխավորությունների գծով վարկային ռիսկի մեծությունը:
5) 7-19-րդ սյունակներում լրացվում է հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների կամ տրամադրված երաշխավորությունների մեծությունը՝ հազար դրամներով, փոխարկման գործոնների միջոցով վարկային ռիսկի վերածելուց հետո՝ խմբավորված ըստ ռիսկի կշիռների:
6) 20-րդ սյունակում ամփոփվում է այն հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների և տրամադրված երաշխավորությունների գծով վարկային ռիսկը, որոնց վրա չեն տարածվում ՎՌՁՄ-ները:

75. Թիվ 16 հաշվետվության 7-րդ աղյուսակում ներկայացվում են Կանոնակարգ 5/09-ի համաձայն վարկային ռիսկի հաշվարկում ներառվող այն հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների և տրամադրված երաշխավորությունների վարկային ռիսկի հաշվարկներն ըստ օրերի, որոնց վրա տարածվում են ՎՌՁՄ-ները:

76. Թիվ 16 հաշվետվության 7-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) ***«Հաշվեկշռային վարկային ռիսկի մեծությունը, որի ռիսկի կշիռը ՎՌՁՄ կիրառման արդյունքում փոխվել է»*** սյունակում լրացվում է ՎՌՁՄ ենթակա ակտիվների այն մասը, որոնց ռիսկի կշիռը ՎՌՁՄ կիրառման արդյունքում փոխվել է:
2) ***«ՎՌՁՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը»*** սյունակում լրացվում է ՎՌՁՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը:
3) 2-21-րդ սյունակներում լրացվում են հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների կամ տրամադրված երաշխավորությունների մեծությունները՝ հազար դրամներով, փոխարկման գործոնների միջոցով վարկային ռիսկի վերածելուց հետո՝ խմբավորված ըստ ռիսկի կշիռների: ՎՌՁՄ կիրառման դեպքում հետհաշվեկշռային հոդվածի ապահովված մասն արտացոլվում է ապահովվածության ռիսկի կշռին համապատասխան սյունակում, իսկ չապահովված մասը՝ փոխառուի ռիսկի կշռին համապատասխան սյունակում:
4) 22-րդ սյունակում ամփոփվում է այն հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների և տրամադրված երաշխավորությունների գծով վարկային ռիսկը, որոնց վրա տարածվում են ՎՌՁՄ-ները:

77. Թիվ 16 հաշվետվության 8-րդ աղյուսակում վարկային ռիսկի հաշվարկման նպատակով ներկայացվում են ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջները՝ ներառյալ ածանցյալ գործիքները և (կամ) երաշխավորությունները (այդ թվում՝ այլ անձանց նկատմամբ պահանջների այն մասը, որոնք ՎՌՁՄ կիրառման արդյունքում պետք է ստանան ներդրումային ֆոնդերի համար նախատեսված ռիսկի կշիռները): Սույն աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ կանոններին համապատասխան.

1) ***«Ամսվա օրեր»*** սյունակը լրացվում է ըստ հաշվետու ամսվա օրերի հաջորդականության (1, 2, 3,,, 31, որտեղ «1»-ը համընկնում է ամսվա առաջին օրվան, «2»-ը՝ երկրորդ օրվան և այլն): Եթե միևնույն օրվա հաշվարկում առկա են տարբեր ռիսկի կշիռ ունեցող ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջներ, ապա այդ պահանջների վերաբերյալ տեղեկությունները լրացվում են առանձին տողերով:

2) ***«Ռիսկի կշիռը»*** սյունակում լրացվում է Կանոնակարգ 5/09-ի համաձայն հաշվարկված ներդրումային ֆոնդի նկատմամբ պահանջի ռիսկի կշիռը՝ ստորակետից հետո 5 նիշի ճշտությամբ:
3) 3-րդ սյունակում լրացվում է ներդրումային ֆոնդերի նկատմամբ այն պահանջների մեծությունը՝ հնարավոր կորուստների պահուստը նվազեցնելուց հետո, որոնց վրա չեն տարածվում ՎՌՁՄ-ները:
4) 4-րդ սյունակում լրացվում են ներդրումային ֆոնդերի նկատմամբ ՎՌՁՄ-ին ենթակա այն պահանջների մեծությունները՝ հնարավոր կորուստների պահուստները նվազեցնելուց հետո, որոնք չեն ճշգրտվում արժեքի տատանման գործակիցներով: Տվյալ պահանջների վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է նաև սույն հաշվետվության 4-րդ աղյուսակի 1-4-րդ սյունակներում, իսկ այդ պահանջների ռիսկով կշռված մեծությունը՝ 4-րդ աղյուսակի 15-րդ սյունակում:
5) 5-րդ սյունակում լրացվում են ներդրումային ֆոնդերի նկատմամբ ՎՌՁՄ-ի ենթակա այն պահանջների մեծությունները, որոնք ճշգրտվում են արժեքի տատանման գործակիցներով: Տվյալ պահանջների վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է նաև սույն հաշվետվության 5-րդ աղյուսակի 1-4-րդ սյունակներում, իսկ այդ պահանջների ռիսկով կշռված մեծությունը՝ 5-րդ աղյուսակի 15-րդ սյունակում:
6) 6-րդ սյունակում լրացվում են ներդրումային ֆոնդերի գծով այն հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների և տրամադրված երաշխավորությունների գումարները՝ հնարավոր կորուստների պահուստները նվազեցնելուց և ՎՌՓԳ կիրառելուց հետո, որոնց վրա չի տարածվում ՎՌՁՄ-ն: Հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների և տրամադրված երաշխավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է նաև սույն հաշվետվության 6-րդ աղյուսակի 1-9-րդ սյունակներում, իսկ դրանց ռիսկով կշռված մեծությունը՝ 6-րդ աղյուսակի 20-րդ սյունակում:
7) 7-րդ սյունակում լրացվում են ներդրումային ֆոնդերի գծով այն հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների և տրամադրված երաշխավորությունների գումարները՝ հնարավոր կորուստների պահուստները նվազեցնելուց և ՎՌՓԳ կիրառելուց հետո, որոնց վրա տարածվում է ՎՌՁՄ-ն: Հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների և տրամադրված երաշխավորությունների վերաբերյալ տեղեկատվությունը լրացվում է նաև սույն հաշվետվության 7-րդ աղյուսակի 1-11-րդ սյունակներում, իսկ դրանց ռիսկով կշռված մեծությունը՝ 7-րդ աղյուսակի 22-րդ սյունակում: Եթե 1-ին սյունակում լրացվող հաշվետու ամսվա օրերը և 2-րդ սյունակում լրացվող ռիսկի կշիռները համընկնում են, ապա 8-րդ աղյուսակի 3-7-րդ սյունակներում լրացվում են ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջների մեծությունների հանրագումարները: Այն դեպքում, երբ ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջները կամ դրանց մի մասը ՎՌՁՄ կիրառման արդյունքում պետք է ստանան այլ անձանց համար նախատեսված ռիսկի կշիռները, ապա այդ պահանջները չեն լրացվում 8-րդ աղյուսակում և լրացվում են 4-րդ, 5-րդ կամ 7-րդ աղյուսակներում:

78. Թիվ 16 հաշվետվության 7-րդ աղյուսակի մնացած սյունակները լրացվում են աղյուսակ 6-ում սահմանված լրացման հրահանգին համապատասխան:

79. Թիվ 16 հաշվետվության 9-րդ և 10-րդ աղյուսակներում ներկայացվում է արտարժութային ռիսկի տարրերի և արտարժութային ռիսկի հաշվարկը՝ համաձայն Կանոնակարգ 5/09-ի: Կախված այն բանից, թե Կենտրոնական դեպոզիտարիան արտարժութային ռիսկի հաշվարկի որ մեթոդաբանությունն է ընտրել, լրացնում է այս երկու էջերից միայն մեկը:

80. Թիվ 16 հաշվետվության 9-րդ աղյուսակը լրացվում է միայն այն դեպքում, երբ Կենտրոնական դեպոզիտարիան ընտրել է արտարժութային ռիսկի գնահատման ստանդարտ մեթոդաբանությունը:

81. Թիվ 16 հաշվետվության 9-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) ***«Արտարժութային երկար դիրքերի հանրագումար»*** սյունակում լրացվում է արտարժութային երկար դիրքերի հանրագումարը՝ հազար դրամներով:
2) ***«Արտարժութային կարճ դիրքերի հանրագումար»*** սյունակում լրացվում է կարճ դիրքերի հանրագումարը՝ բացարձակ արժեքով (հազար դրամներով):
3) ***«Թանկարժեք մետաղների բանկային կամ ստանդարտացված ծուլակտորների և մետաղական հաշիվների բաց դիրքերի բացարձակ արժեքների հանրագումար»*** սյունակում լրացվում է թանկարժեք մետաղների բանկային ստանդարտացված ծուլակտորների բաց դիրքերի բացարձակ արժեքների հանրագումարը:

82. Թիվ 16 հաշվետվության 10-րդ աղյուսակը լրացվում է միայն այն դեպքում, երբ Կենտրոնական դեպոզիտարիան ընտրել է արտարժութային ռիսկի գնահատման ՎԱՌ մեթոդաբանությունը:

83. Թիվ 16 հաշվետվության 10-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) ***«Օրական ՎաՌ»*** սյունակում լրացվում է արտարժութային օրական ՎաՌ-երի մեծությունը՝ ըստ օրերի:
2) ***«Գերազանցող օրերի քանակը»*** սյունակում լրացվում է, թե հաշվետու ամսվան նախորդող 250 աշխատանքային օրերի ընթացքում փոխարժեքի փոփոխության պատճառով քանի անգամ է Կենտրոնական դեպոզիտարիայի օրական կորուստների մեծությունը գերազանցել տվյալ օրվա արտարժութային օրական ՎաՌ-ը:

84. Թիվ 16 հաշվետվության 11-րդ աղյուսակում լրացվում են շուկայական ռիսկի հաշվարկում տոկոսադրույքի և բաժնային արժեթղթերի գնային ռիսկերը ներառելու պահանջի առկայությունը որոշելու համար Կանոնակարգ 5/09-ով այդ նպատակով սահմանված ցուցանիշները, այն է.

1) շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների հանրագումարի և ընդհանուր հաշվեկշռային ակտիվների հարաբերությունը (տոկոսային արտահայտությամբ),
2) շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների հանրագումարի և Կենտրոնական դեպոզիտարիայի նորմատիվային ընդհանուր կապիտալի հարաբերությունը (տոկոսային արտահայտությամբ):

85. Թիվ 16 հաշվետվության 11-րդ աղյուսակի սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) ***«Ընդհանուր հաշվեկշռային ակտիվներ»*** սյունակում լրացվում է հաշվեկշռային ակտիվների հանրագումարը՝ հազար դրամներով:
2) ***«Շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ»*** սյունակում լրացվում է Կենտրոնական դեպոզիտարիայի շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվների ընդհանուր հաշվեկշռային արժեքը՝ հազար դրամներով:
3) ***«Նորմատիվային ընդհանուր կապիտալ»*** սյունակում լրացվում է սույն հաշվետվության 2-րդ աղյուսակի համաձայն հաշվարկված նորմատիվային ընդհանուր կապիտալի մեծությունը՝ հազար դրամներով:

86. Թիվ 16 հաշվետվության 12-14-րդ աղյուսակները լրացման են ենթակա միայն այն դեպքում, երբ հաշվետու ժամանակաշրջանին նախորդող ամսվա կամ հաշվետու ամսվա միջին օրական հաշվարկով 84-րդ կետի 1-ին ենթակետում նշված ցուցանիշը գերազանցում է 3 տոկոսը, կամ 2-րդ ցուցանիշը՝ 20 տոկոսը:

87. Թիվ 16 հաշվետվության 12-րդ աղյուսակում ներկայացվում է տոկոսադրույքի հատուկ ռիսկի հաշվարկը՝ համաձայն Կանոնակարգ 5/09-ի: 12-րդ աղյուսակի 1-26-րդ սյունակներում լրացվում են պարտքային արժեթղթերի երկար և կարճ դիրքերը՝ խմբավորված ըստ պարտքային արժեթղթերի տեսակների և մինչև մարումն ընկած ժամկետայնությունների՝ համաձայն Կանոնակարգ 5/09-ի: Ընդ որում, կարճ դիրքերը լրացվում են բացարձակ արժեքով:

88. Թիվ 16 հաշվետվության 13-րդ աղյուսակում ներկայացվում է տոկոսադրույքի ընդհանուր ռիսկի հաշվարկը՝ համաձայն Կանոնակարգ 5/09-ի: 1-26-րդ սյունակներում լրացվում են պարտքային արժեթղթերի երկար և կարճ դիրքերը՝ խմբավորված ըստ պարտքային արժեթղթերի ժամանակային գոտիների և պարտքային արժեթղթերի մինչև մարումն ընկած ժամկետայնությունների՝ համաձայն Կանոնակարգ 5/09-ի, 27-34-րդ սյունակներում լրացվում են Կանոնակարգ 5/09-ի համաձայն ընդհանուր ռիսկի հաշվարկման համար անհրաժեշտ նվազագույն դիրքերը՝ ըստ համապատասխան գոտիների: Ընդ որում, կարճ դիրքերը լրացվում են բացարձակ արժեքով:

89. Թիվ 16 հաշվետվության 14-րդ աղյուսակում ներկայացվում է բաժնային արժեթղթերի գնային ռիսկերի հաշվարկը՝ համաձայն Կանոնակարգ 5/09-ի:

90. Թիվ 16 հաշվետվության 14-րդ աղյուսակի «Ա» մասի սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) ***«Բաժնային արժեթղթերի երկար դիրքերի հանրագումար» սյունակում*** լրացվում է Կանոնակարգ 5/09-ով սահմանված բաժնային արժեթղթերի երկար դիրքերի հանրագումարը՝ հազար դրամներով՝ ըստ օրերի:

2) ***«Բաժնային արժեթղթերի կարճ դիրքերի հանրագումար» սյունակում*** կարճ դիրքերի հանրագումարը բացարձակ մեծությամբ՝ հազար դրամներով՝ ըստ օրերի:

3) ***«Բաժնային արժեթղթերի համախառն զուտ դիրք»*** սյունակում լրացվում է բաժնային արժեթղթերի երկար և կարճ (բացարձակ մեծությամբ) դիրքերի տարբերությունը՝ հազար դրամներով:

91. Թիվ 16 հաշվետվության 14-րդ աղյուսակի «Բ» մասի սյունակները լրացվում են հետևյալ լրացման հրահանգին համապատասխան.

1) ***«Բաժնային արժեթղթերի երկար դիրքերի հանրագումար»*** սյունակներում (1-ին և 3-րդ) լրացվում են բաժնային արժեթղթերի երկար դիրքերի հանրագումարները՝ հազար դրամներով՝ խմբավորված համապատասխանաբար ըստ իրացվելի և դիվերսիֆիկացված բաժնային արժեթղթերի և այլ բաժնային արժեթղթերի:

2) ***«Բաժնային արժեթղթերի կարճ դիրքերի հանրագումար»*** սյունակներում (2-րդ և 4-րդ) լրացվում են բաժնային արժեթղթերի կարճ դիրքերի հանրագումարները՝ հազար դրամներով, բացարձակ արժեքով՝ խմբավորված համապատասխանաբար ըստ իրացվելի և դիվերսիֆիկացված բաժնային արժեթղթերի և այլ բաժնային արժեթղթերի:

92. Թիվ 16 հաշվետվության 15-րդ և 16-րդ աղյուսակում ներկայացվում է գործառնական ռիսկի հաշվարկը՝ համաձայն Կանոնակարգ 5/09-ի: Կախված նրանից, թե Կենտրոնական դեպոզիտարիան գործառնական ռիսկի հաշվարկման որ մոտեցումն է ընտրել, լրացվում է աղյուսակներից միայն մեկը:

93. Թիվ 16 հաշվետվության 15-րդ աղյուսակը լրացվում է այն դեպքում, երբ Կենտրոնական դեպոզիտարիան ընտրել է գործառնական ռիսկի հաշվարկման հիմնական բնութագրիչների մոտեցումը: Աղյուսակի 1-ին, 2-րդ և 3-րդ սյունակներում լրացվում են Կանոնակարգ 5/09-ով սահմանված Կենտրոնական դեպոզիտարիայի՝ համապատասխանաբար հաշվետու ժամանակաշրջանին նախորդող 3-րդ տարվա, հաշվետու ժամանակաշրջանին նախորդող 2-րդ տարվա, հաշվետու ժամանակաշրջանին նախորդող տարվա զուտ եկամուտները: Նշված սյունակներում համապատասխան մեծությունները լրացվում են միայն այն դեպքերում, երբ համապատասխան տարվա զուտ եկամուտը մեծ կամ հավասար է 0-ի:

94. Թիվ 16 հաշվետվության 16-րդ աղյուսակը լրացվում է այն դեպքում, երբ Կենտրոնական դեպոզիտարիան ընտրել է գործառնական ռիսկի հաշվարկման ստանդարտացված մոտեցումը:

95. Թիվ 16 հաշվետվության 16-րդ աղյուսակի 2-րդ և 3-րդ սյունակներում լրացվում են Կանոնակարգ 5/09-ով սահմանված զուտ եկամուտներն ըստ խմբերի և տարիների: Նշված սյունակներում համապատասխան մեծությունները լրացվում են միայն այն դեպքերում, երբ համապատասխան տարվա զուտ եկամուտը (ըստ խմբերի) մեծ կամ հավասար է 0-ի:

ԳԼՈՒԽ 17. Ն2 ՆՈՐՄԱՏԻՎԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԹԻՎ 16 ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ԼՐԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

96. Թիվ 17 հաշվետվությունում ներկայացվում են բարձր իրացվելի ակտիվների և ցպահանջ պարտավորությունների միջև սահմանային հարաբերակցության՝ Ն2 նորմատիվի վերաբերյալ տեղեկությունները, որոնք հաշվարկվում են Կանոնակարգ 5/09-ով սահմանված կարգով: Այն օրերին, երբ Կենտրոնական դեպոզիտարիայի հաշվետվությունը փոփոխություն չի կրել (ներառյալ ոչ աշխատանքային օրերը), սույն հաշվետվությունում լրացվում են նախորդ օրվա տվյալները:

97. Թիվ 17 հաշվետվությունը բաղկացած է երկու աղյուսակից, որոնք լրացվում են սույն կանոնակարգի 98-99-րդ կետերի համաձայն:

98. Թիվ 17 հաշվետվության 1-ին աղյուսակում ներկայացվում և ամփոփվում են Ն2 նորմատիվի հաշվարկին մասնակցող ամսվա միջին օրական ցուցանիշներն ու նորմատիվի փաստացի մեծությունները՝ հաշվարկված համաձայն Կանոնակարգ 5/09-ի:

99. Թիվ 17 հաշվետվության 2-րդ աղյուսակում ներկայացվում են Ն2 նորմատիվի հաշվարկին մասնակցող տարրերի օրական մեծությունները՝ հազար դրամներով:

1) ***«Ամսվա օրեր»*** սյունակը լրացվում է ըստ հաշվետու ամսվա օրերի հաջորդականության (1, 2, 3,,, 31, որտեղ «1»-ը համընկնում է ամսվա առաջին օրվան, «2»-ը՝ երկրորդ օրվան և այլն):

2) ***«Բարձի իրացվելի ակտիվներ»*** սյունակում լրացվում է Կանոնակարգ 5/09-ով սահմանված կարգով հաշվարկված Կենտրոնական դեպոզիտարիայի բարձր իրացվելի ակտիվների մեծությունը:

3) ***«Ցպահանջ պարտավորություններ»*** սյունակում լրացվում է Կանոնակարգ 5/09-ով սահմանված կարգով հաշվարկված Կենտրոնական դեպոզիտարիայի ցպահանջ պարտավորությունների մեծությունը:»,

7) Կանոնակարգի Հավելված 3-ի հաշվետվություն թիվ 7-ում «Արժեթղթերի փոխանցման հիմքը» սյունակից հետո լրացնել «Վերջնահաշվարկի տեսակը» վերնագրով նոր սյունակ,
8) Կանոնակարգի Հավելված 8-ի հաշվետվություն թիվ 13-ի վերնագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 13
ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇԻՎՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
(շաբաթական, ամսական)»,

9) Կանոնակարգը լրացնել նոր Հավելված 9-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 1-ի (կցվում է),
10) Կանոնակարգը լրացնել նոր Հավելված 10-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 2-ի (կցվում է),
11) Կանոնակարգը լրացնել նոր Հավելված 11-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 3-ի (կցվում է),
12) Կանոնակարգը լրացնել նոր Հավելված 12-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 4-ի (կցվում է),
13) Կանոնակարգը լրացնել նոր Հավելված 13-ով՝ համաձայն սույն որոշման Հավելված 5-ի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ն. Երիցյան
8 օգոստոսի 2018 թ., N 137-Ն

Հավելված 1
Հաստատված է ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի
2018 թվականի օգոստոսի 3-ի թիվ 137-Ն որոշմամբ

«Հավելված 9
«Կենտրոնական դեպոզիտարիայի՝ կենտրոնական
բանկ ներկայացվող հաշվետվությունները, դրանց
ներկայացման կարգը, ձևը և ժամկետները»
կանոնակարգ 5/04-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14
ՀԱՇՎԵՏԵՐԵՐԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԴՐԱՄԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(շաբաթական, տարեկան)

Կենտրոնական դեպոզիտարիայի անվանումը _____

Ամսաթիվը _____*թ-ից*

մինչև _____*թ.*

Աղյուսակ 1. Կենտրոնական դեպոզիտարիայում հաշվառվող դրամական միջոցներ

N	Հաշվետիրոջ տեսակը	Հաշվետիրոջ ռեզիդենտայ-նությունը	Հաշվի տեսակը	Արժույթի ԻՍՕ կոդը	Հաշվառման հաշվում առկա դրամական միջոցների ծավալը	Դրամական միջոցները պահող ֆինանսական կազմակերպության տեսակը
1						
2						
3						
4						
5						
6						
7						
8						
9						
10						
11						
12						
13						
14						
15						
16						
17						
18						
19						
20						

Աղյուսակ 2. Կենտրոնական դեպոզիտարիայի կողմից ֆինանսական կազմակերպությունների մոտ պահվող դրամական միջոցներ

N	Ֆինանսական կազմակերպության տեսակը	Արժույթի ISO կոդը	Դրամական միջոցների ծավալը
1			
2			
3			
4			
5			
6			
7			
8			
9			
10			

Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր տնօրեն _____
(ստորագրություն)
Գլխավոր հաշվապահ _____
(ստորագրություն)

Կ.Տ.»:

Հավելված 2
Հաստատված է
ՀՀ ԿԲ խորհրդի 2018 օգոստոսի 3-ի
թիվ 137-Ն որոշմամբ

«Հավելված 10
«Կենտրոնական դեպոզիտարիայի՝ Կենտրոնական բանկ
ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը,
ծևը և ժամկետները» կանոնակարգ 5/04-ի

Հաշվետվություն թիվ 15
Դրամական միջոցների հաշվառման հաշիվներով կատարված գործառնությունների վերաբերյալ

(շաբաթական, տարեկան)

1. Արժեթղթերի առաքման դիմաց վճարում

N	Գործառնության եղանակը	Օգտագործվող համակարգը	Ֆինանսական կազմակերպության տեսակը	Գործարքի կնքման վայրը	Գործառնության գումարը	Արժույթի ԻՍՕ կոդը	Գործարքի քանակը
1							
2							
3							
4							
5							
6							
7							
8							
9							
10							

2. Վճարման դիմաց վճարում ներքին փոխանցումներ (PVP)

N	Օգտագործվող համակարգը-I	Օգտագործվող համակարգը-II	Ֆինանսական կազմակերպության տեսակը-I	Ֆինանսական կազմակերպության տեսակը-II	Արժութային զույգի ԻՍՕ կոդերը	Առաջին արժույթի ծավալ	Երկրորդ արժույթի ծավալ	Գործարքի քանակը
1								
2								
3								
4								
5								
6								
7								
8								
9								

10								

3. Փոխարկման արդյունքում (FX) արտաքին փոխանցման և արտաքին համալրման գործառնություններ

N	Օգտագործվող համակարգը	Ֆինանսական կազմակերպության տեսակը	Արժութային զույգի ԻՍՕ կոդերը	Առաջին արժույթի ծավալ (արտաքին փոխանցում)	Երկրորդ արժույթի ծավալ (արտաքին համալրում)	Գործարքի քանակը
1						
2						
3						
4						
5						
6						
7						
8						
9						
10						

4. Գրավադրում, հարկադիր արգելադրում

N	Գործառնության միջոցը	Գործառնության տեսակը	Օգտագործվող համակարգը	Ֆինանսական կազմակերպության տեսակը	Գործառնության նպատակը	Արժույթի ԻՍՕ կոդը	Գործարքի քանակը
1							
2							
3							
4							
5							
6							
7							
8							
9							
10							

5. Այլ գործառնություններ

N	Գործառնության ծածկագիրը (համարը)	Գործառնության եղանակը	Գործառնության տեսակը	Օգտագործվող համակարգը	Ֆինանսական կազմակերպության տեսակը	Հանձնարարականի տրման ամսաթիվը (առկայության դեպքում)	Գործառնության ժամը	Գործառնության գումարը	Արժույթի ԻՍՕ կոդը	Գործառնության նպատակը	Գործառնությունը նախաձեռնող անձը (հայտնի լինելու դեպքում)			Գործառնության հակադարձ կողմը		
											Անուն, ազգանունը (անվանումը)	Հաշվի համարը	Ռեզիդենտությունը	Անուն, ազգանունը (անվանումը)	Հաշվի համարը	Ռեզիդենտությունը
1																
2																
3																
4																
5																
6																
7																
8																
9																
10																

Կենտրոնական դեպոզիտարիայի գործադիր տնօրեն ______________________________
(ստորագրություն)
Գլխավոր հաշվապահ ______________________________
(ստորագրություն)

Կ.Տ.»:

Հավելված 3
Հաստատված է
ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 2018 թվականի
օգոստոսի 3-ի թիվ 137-Ն որոշմամբ

«Հավելված 11
«Կենտրոնական դեպոզիտարիայի՝ Կենտրոնական բանկ
ներկայացվող հաշվետվությունները, դրանց ներկայացման կարգը,
ձևը և ժամկետները» կանոնակարգ 5/04-ի

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 16
Կապիտալի համարժեքության նորմատիվի (Ն1) վերաբերյալ
(ամսական)

Կենտրոնական դեպոզիտարիայի անվանումը _____

Ամսաթիվը _____ *թ.-ից մինչև* _____ *թ.*

Աղյուսակ 1. Հիմնական տնտեսական նորմատիվներ և դրանց հաշվարկին մասնակցող ամփոփ ցուցանիշներ

(հազար դրամ)

Ընդհանուր կապիտալ						Ն1 նորմատիվի մեծությունը (1/ (2+(8.33)*(3+4+5+6)))
	Վարկային ռիսկ	Շուկայական ռիսկ			Գործառնական ռիսկ	
		Արտարժութային ռիսկ	Տոկոսադրույքի ռիսկ	Բաժնային արժեթղթերի գնային ռիսկ		
1	2	3	4	5	6	7

Աղյուսակ 2. Հաշվեկշռային և նորմատիվային ընդհանուր կապիտալի հաշվարկը

(հազար դրամ)

Ամսվա օրերը	Հաշվեկշռային			Նորմատիվային կապիտալի հաշվարկի համար անհրաժեշտ հինգական կապիտալից պակասեցվող գումարներ	Նորմատիվային լրացուցիչ կապիտալի հաշվարկում չընդգրկվող գումարներ	Նորմատիվների հաշվարկին մասնակցող			
	Հիմնական կապիտալ	Լրացուցիչ կապիտալ	Ընդհանուր կապիտալ			Հիմնական կապիտալ (1-4)	Լրացուցիչ կապիտալ (2-5)	Լրացուցիչ կապիտալ (ոչ ավելի, քան հիմնական կապիտալի 50%)	Ընդհանուր կապիտալ (6+8)
	1	2	3	4	5	6	7	8	9
1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									
11									
12									
13									
14									
15									
16									
17									
18									
19									
20									
21									
22									
23									
24									
25									
26									
27									
28									
29									
30									
31									
Միջին									

Աղյուսակ 3. Վարկային ռիսկի հաշվարկը (ակտիվներ, որոնց վրա չեն տարածվում ՎՌՀՄ-ները)

(հազար դրամ)

Անվա օրերը	Ռիսկի 0% կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 10% կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 30% կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 30% կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 50% կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 75% կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 100% կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 110% կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 150% կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ռիսկի 225% կշիռ	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Վարկային ռիսկ ((1-2)*0%+(3-4)*10%+ (5-6)*20%+(7-8)*30%+(9-10)*50%+(11-12)*75% + (13-14)*100% +(15-16)*110%+(17-18) *150%+ (19-20)*225%
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21
1																					
2																					
3																					
4																					
5																					
6																					
7																					
8																					
9																					
10																					
11																					
12																					
13																					
14																					
15																					
16																					
17																					
18																					
19																					
20																					
21																					
22																					
23																					
24																					
25																					
26																					
27																					
28																					
29																					
30																					
31																					
Միջին																					

Աղյուսակ 4. Վարկային ռիսկի հաշվարկը (ՎՌՋՄ-ենթակա ակտիվներ, որոնց մեծությունը չի ճշգրտվում արժեքի տատանման գործակիցներով)

(հազար դրամ)

Անվանում օրերը	ՎՌՋՄ ենթակա ակտիվների ընդհանուր գումարը	Ակտիվների հնարավոր կորուստների պահուստ	Ակտիվների մեծությունը, որոնց ռիսկի կշիռը ՎՌՋՄ կիրառման արդյունքում փոխվել է	ՎՌՋՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը	Ռիսկի 0% կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը ճնշագեցնելուց հետո	Ռիսկի 10% կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը ճնշագեցնելուց հետո	Ռիսկի 20% կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը ճնշագեցնելուց հետո	Ռիսկի 30% կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը ճնշագեցնելուց հետո	Ռիսկի 50% կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը ճնշագեցնելուց հետո	Ռիսկի 75% կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը ճնշագեցնելուց հետո	Ռիսկի 100% կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը ճնշագեցնելուց հետո	Ռիսկի 110% կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը ճնշագեցնելուց հետո	Ռիսկի 150% կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը ճնշագեցնելուց հետո	Ռիսկի 225% կշիռ ունեցող ակտիվներ հնարավոր կորուստների պահուստը ճնշագեցնելուց հետո	ՎՌՋՄ ենթակա ակտիվների գծով կարգավիճակ ռիսկ (5)*0%+(6)*10%+(7)*20%+(8)*30%+(9)*50%+(10)*75%+(11)*100%+(12)*110%+(13)*150%+(14)*225%
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1															
2															
3															
4															
5															
6															
7															
8															
9															
10															
11															
12															
13															
14															
15															
16															
17															
18															
19															
20															
21															
22															
23															
24															
25															
26															
27															
28															
29															
30															
31															
Միջին															

Աղյուսակ 5. Վարկային ռիսկի հաշվարկը (ՎՌՀՄ-ենթակա ակտիվներ, որոնց մեծությունը ճշգրտվում է արժեքի տատանման գործակիցներով)

(հազար դրամ)

Անվանումը	ՎՌՀՄ ենթակա ակտիվների ընդհանուր գումարը	Ակտիվների հաշվարկը կորուստների պահուստ	Ակտիվների մեծությունը, որոնց ռիսկի կշիռը ՎՌՀՄ կիրառման արդյունքում փոխվել է	ՎՌՀՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը	Ռիսկի 0% կշիռ ունեցող ակտիվների հաշվարկը կորուստների պահուստը նվազեցնելուց հետո	Ռիսկի 10% կշիռ ունեցող ակտիվների հաշվարկը կորուստների պահուստը նվազեցնելուց հետո	Ռիսկի 20% կշիռ ունեցող ակտիվների հաշվարկը կորուստների պահուստը նվազեցնելուց հետո	Ռիսկի 30% կշիռ ունեցող ակտիվների հաշվարկը կորուստների պահուստը նվազեցնելուց հետո	Ռիսկի 50% կշիռ ունեցող ակտիվների հաշվարկը կորուստների պահուստը նվազեցնելուց հետո	Ռիսկի 75% կշիռ ունեցող ակտիվների հաշվարկը կորուստների պահուստը նվազեցնելուց հետո	Ռիսկի 100% կշիռ ունեցող ակտիվների հաշվարկը կորուստների պահուստը նվազեցնելուց հետո	Ռիսկի 110% կշիռ ունեցող ակտիվների հաշվարկը կորուստների պահուստը նվազեցնելուց հետո	Ռիսկի 150% կշիռ ունեցող ակտիվների հաշվարկը կորուստների պահուստը նվազեցնելուց հետո	Ռիսկի 225% կշիռ ունեցող ակտիվների հաշվարկը կորուստների պահուստը նվազեցնելուց հետո	ՎՌՀՄ ենթակա ակտիվների գծով վարկային ռիսկ (5)*0%+(6)*10%+(7)*20%+(8)*30%+(9)*50%+(10)*75%+(11)*100%+(12)*110%+(13)*150%+(14)*225%
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1															
2															
3															
4															
5															
6															
7															
8															
9															
10															
11															
12															
13															
14															
15															
16															
17															
18															
19															
20															
21															
22															
23															
24															
25															
26															
27															
28															
29															
30															
31															
Միջին															

Աղյուսակ 6. Վարկային ռիսկի հաշվարկը (հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների և տրամադրված երաշխավորություններ, որոնց վրա չեն տարածվում ՎՌՀՄ-ները)

(հազար դրամ)

Անվանումը	Հետհաշվեկշռային ածանցյալ գործիքներ (դրամային հոդվածներ)	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՌՓԳ կիրառումից հետո (1-2) * 1 %	Հետհաշվեկշռային ածանցյալ գործիքներ (արտարժութային հոդվածներ)	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՌՓԳ կիրառումից հետո (4-5) * 1,5 %	Երաշխավորություններ	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՌՓԳ կիրառումից հետո (7-8) * 100 %	Ռիսկի 0% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 10% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 20% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 30% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 50% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 75% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 100% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 110% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 150% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 225% կշիռ (3+6+9)-ից	Ընդամենը վարկային ռիսկ
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20
1																				
2																				
3																				
4																				
5																				
6																				
7																				
8																				
9																				
10																				
11																				
12																				
13																				
14																				
15																				
16																				
17																				
18																				
19																				
20																				
21																				
22																				
23																				
24																				
25																				
26																				
27																				
28																				
29																				
30																				
31																				
Միջին																				

Աղյուսակ 7. Վարկային ռիսկի հաշվարկը (հետհաշվեկշռային ածանցյալ գործիքների և տրամադրված երաշխավորություններ, որոնց վրա տարածվում են ՎՌՀՄ-ները)

(հազար դրամ)

Անվանումներ	Հետհաշվեկշռային ածանցյալ գործիքներ (դրամային հոդվածներ)	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՌՓԳ կիրառումից հետո (1-2) * 1 %	Հետհաշվեկշռային ածանցյալ գործիքներ (արտարժութային հոդվածներ)	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՌՓԳ կիրառումից հետո (4-5) * 1,5 %	Երաշխավորություններ	Պահուստ	Վարկային ռիսկի մեծությունը ՎՌՓԳ կիրառումից հետո (7-8) * 100 %	Հետհաշվեկշռային վարկային ռիսկի մեծությունը, որի ռիսկի կշիռը ՎՌՀՄ կիրառման արդյունքում փոխվել է	ՎՌՀՄ կիրառման արդյունքում վարկային ռիսկի փոփոխությունը	Ռիսկի 0% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 10% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 20% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 30% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 50% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 75% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 100% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 110% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 150% կշիռ (3+6+9)-ից	Ռիսկի 225% կշիռ (3+6+9)-ից	Ընդամենը վարկային ռիսկ
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15	16	17	18	19	20	21	22
1																						
2																						
3																						
4																						
5																						
6																						
7																						
8																						
9																						
10																						
11																						
12																						
13																						
14																						
15																						
16																						
17																						
18																						
19																						
20																						
21																						
22																						
23																						
24																						
25																						
26																						
27																						
28																						
29																						
30																						
31																						
Միջին																						

Աղյուսակ 8. Ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջների վարկային ռիսկի հաշվարկը (3-ից 7-րդ աղյուսակներում ներառելու համար)

(հազար դրամ)

Ամսվա օրեր	Ռիսկի կշիռ	Ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջի մեծությունը հնարավոր կորուստների պահուստը նվազեցնելուց հետո (ակտիվներ, որոնց վրա չեն տարածվում ՎՌՁՄ-ները)	Ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջի մեծությունը հնարավոր կորուստների պահուստը նվազեցնելուց հետո (ՎՌՁՄ-ի ենթակա ակտիվներ, որոնց մեծությունը չի ճշգրտվում արժեքի տատանման գործակիցներով)	Ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջի մեծությունը հնարավոր կորուստների պահուստը նվազեցնելուց հետո (ՎՌՁՄ-ի ենթակա ակտիվներ, որոնց մեծությունը ճշգրտվում է արժեքի տատանման գործակիցներով)	Ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջի մեծությունը հնարավոր կորուստների պահուստը նվազեցնելուց հետո (հետհաշվեկշռային ածանցյալ գործիքներ և տրամադրված երաշխավորություններ, որոնց վրա չեն տարածվում ՎՌՁՄ-ները)	Ներդրումային ֆոնդերի նկատմամբ պահանջի մեծությունը հնարավոր կորուստների պահուստը նվազեցնելուց հետո (հետհաշվեկշռային ածանցյալ գործիքներ և տրամադրված երաշխավորություններ, որոնց վրա տարածվում են ՎՌՁՄ-ները)
1	2	3	4	5	6	7

Աղյուսակ 9. Արտարժութային ռիսկի հաշվարկը (ստանդարտ մեթոդաբանություն)

(հազար դրամ)

Արտարժութային ռիսկի հաշվարկ (Ստանդարտ մեթոդաբանություն)					
Ամսվա օրերը	Արտարժութային երկար դիրքերի հանրագումար	Արտարժութային կարճ դիրքերի հանրագումար (բացարձակ մեծությամբ)	Թանկարժեք մետաղների բանկային կամ ստանդարտացված ծուլակտորների և մետաղական հաշիվների բաց դիրքերի բացարձակ արժեքների հանրագումար	Արտարժութային առավելագույն դիրքը	Արտարժութային ռիսկ (4) * 12%
	1	2	3	4	5
1					
2					
3					
4					
5					
6					
7					
8					
9					
10					
11					
12					
13					
14					
15					
16					
17					
18					
19					
20					
21					
22					
23					
24					
25					
26					
27					
28					
29					
30					
31					
Առավելագույն					

Աղյուսակ 10. Արտարժութային ռիսկի հաշվարկը (ՎաՌ մեթոդաբանություն)

(հազար դրամ)

Ամսվա օրեր	Օրական ՎաՌ	Տասնօրյա ՎաՌ	Գերազանցող օրերի քանակը	Գ	Արտարժութային ռիսկ
	1	2	3	4	5
1					
2					
3					
4					
5					
6					
7					
8					
9					
10					
11					
12					
13					
14					
15					
16					
17					
18					
19					
20					
21					
22					
23					
24					
25					
26					
27					
28					
29					
30					
31					
Միջին					

Աղյուսակ 11. Հաշվարկներ տոկոսադրույքի և բաժնային արժեթղթերի գնային ռիսկերը շուկայական ռիսկի հաշվարկում ներառելու պահանջի առկայությունը որոշելու նպատակով

(հազար դրամ)

Անվանումը	Ընդհանուր հաշվեկշռային ակտիվներ	Շահույթ/վնասով վերհաշվարկվող իրական արժեքով հաշվառվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	Նորմատիվային ընդհանուր կապիտալ	(Շահույթ/վնասով վերհաշվարկվող իրական արժեքով հաշվառվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ)/(Ընդհանուր հաշվեկշռային ակտիվներ)	((Շահույթ/վնասով վերհաշվարկվող իրական արժեքով հաշվառվող և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ)/(Նորմատիվային ընդհանուր կապիտալ)
	1	2	3	4	5
1					
2					
3					
4					
5					
6					
7					
8					
9					
10					
11					
12					
13					
14					
15					
16					
17					
18					
19					
20					
21					
22					
23					
24					
25					
26					
27					
28					
29					
30					
31					
Միջին					

Աղյուսակ 12. Տոկոսադրույքի հատուկ ռիսկի հաշվարկը

(հազար դրամ)

Ամսվա օրերը	Պետական պարտքային արժեթղթեր																		Հուսալի պարտքային արժեթղթեր						Պարտքային այլ արժեթղթեր		Տոկոսադրույքի հատուկ ռիսկ (պարտքային արժեթղթերի համախառն դիրք)
	ՀՀ դրամով Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթեր, Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտատոմսեր, /ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ-/ԱԱ3/ վարկանիշ ունեցող օտարերկրյա կենտրոնական բանկերի, /ԱԱԱ/Աաա/-ից /ԱԱ-/Աա3/ վարկանիշ ունեցող օտարերկրյա կենտրոնական բանկերի, կառավարությունների, տեղական կառավարման մարմինների կողմից թողարկված պարտքային արժեթղթեր						Արտարժույթով Կենտրոնական բանկի կողմից թողարկված արժեթղթեր, Հայաստանի Հանրապետության պետական գանձապետական պարտատոմսեր, /Ա+/Ա1/-ից /ԲԲԲ-/Բաա3/ վարկանիշ ունեցող օտարերկրյա կենտրոնական բանկերի, կառավարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թողարկված պարտքային արժեթղթեր						/ԲԲ+/Բա1/-ից /Բ-/Բ3/ վարկանիշ ունեցող օտարերկրյա կենտրոնական բանկերի, կառավարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թողարկված պարտքային արժեթղթեր		/Բ-/Բ3/–ից ցածր վարկանիշ ունեցող օտարերկրյա կենտրոնական բանկերի, կառավարությունների, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից թողարկված պարտքային արժեթղթեր		Վարկանիշ չունեցող										
	< 1 տարի		≥1 տարի, <5 տարի		≥ 5 տարի		< 1 տարի		≥1 տարի, <5 տարի		≥ 5 տարի								< 1 տարի		≥1 տարի, <5 տարի		≥ 5 տարի				
	1%		2%		4%		2%		3%		6%		8%		12%		8%		2%		6%		12%		20%		
